

Էթնիկական  
փոքրամասնությունների  
ներկայացուցիչների  
քաղաքական  
կյանքում մասնակցության  
հետազոտություն  
Բաց հասարակության  
հիմնադրամ



## Բովանդակություն.

1. Ներածություն.....	3
2. Հետազոտության մեթոդաբանություն .....	4
2.1 Որակական հետազոտություն .....	5
2.2 Քանակական հետազոտություն .....	6
3. Գրականության վերանայումը.....	9
4. Երկրորդական տվյալների վերլուծությունը .....	12
5. Քանակական հետազոտության (Հարցումների) արդյունքները .....	30
5.1. Հետազոտության մասնակիցների սոցիալ-դեմոգրաֆիական պրոֆիլը.....	30
5.2 Զանգվածային լրատվության միջոցների դերը.....	41
5.3 Քաղաքական համակարգի և իրադարձությունների գնահատումը.....	49
5.4 Մասնակցություն ընտրություններին .....	73
5.5 Քաղաքական կուսակցությունների դերը .....	79
5.6 Մասնակցություն տեղական ինքնակառավարման մեջ.....	86
5.7 Քաղաքացիական կազմակերպությունների դերը.....	92
6. Եզրակացություն.....	95
7. Բիբլիոգրաֆիա .....	99

## 1. Ներածություն

Էթնիկական փոքրամասնության քաղաքացիական, քաղաքական և սոցիալական ինտեգրումը վրացական ժողովրդավարության զարգացման մեջ մնում է սուր խնդիրներից մեկը: Չնայած նրան, որ վերջին տարիների ընթացքում շատ նախագիծ թե նախաձեռնություն իրականացվեց այս ուղղությամբ, կարևոր զարգացում էթնիկական փոքրամասնությունների ինտեգրման և քաղաքական կյանքում ներգրավվածության տեսանկյունից չի եղել (Հանրային պաշտպան, 2018):

Այսօրվա դրությամբ, էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները երկրի բնակչության մոտավորապես վեցերորդ մասն են կազմում (Նրանցից մեծ մասն են. մեծամասնությամբ հայերը և ադրբեջանցիները, կոմպակտ բնակեցված են երկրի հարավ՝ Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլի շրջաններում, արևելքի՝ Կախեթի շրջաններում և նաև, փոքր էթնիկական խմբերը Վրաստանի տարբեր շրջաններում) (Ըստ Վրաստանի օրենսդրությանը, 2015): Այնուամենայնիվ, քանի որ շատ զեկույցումներ կան որոնք ցույց են տալիս, որ նրանց ներգրավվածության մակարդակը հետխորհրդային Վրաստանի հասարակական կյանքում ցածր էր և այդ հատկապես ուշագրավ է, երբ որ գործը վերաբերվում է փոքրամասնությունների մասնակցությանը քաղաքական կյանքում, նրանց ներկայացվածությանը ընտրովի մարմիններում և պետական հաստատություններում (Էթնիկականության և բազմամշակութային հետազոտությունների կենտրոն, 2018): Էթնիկական փոքրամասնությունների բացառությունը քաղաքական կյանքից, նրանց ինտեգրման ցածր մակարդակը հանրային քաղաքականության մեջ կանխում է Վրաստանում ժողովրդավարական և կայուն պետության կառուցումը:

Էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները պետության հետ չունեն քաղաքական ինքնության զգացում: Նրանցից մեծ մասը, իրականում, դիստանցիա ունի վրացական հասարակությունից և մի տեսակ ինքնավար, կամ ավելի վատ՝ բացառիկ ռեժիմի մեջ է ապրում: Այն ունի տարբեր պատճառներ, որոնց միջև առաջատար է լեզվական արգելքը. Կոմպակտ բնակեցված վայրերում էթնիկական ոչ վրացական բնակչության բացարձակ մեծամասնությունը չի տիրապետում պետական լեզուն (Ազգային ժողովրդավարական ինստիտուտ՝ NDI, 2018): Ռուսաց լեզուն, որը խորհրդային ժամանակաշրջանում այլ էթնիկական խմբերի հետ հաղորդակցվելու միակ լեզուն էր, վերջին տասնհինգ տարիների ընթացքում նշանակալից կորցրեց իր դիրքը: Համապատասխանաբար, էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները ամբողջությամբ չեն տեղեկացվում երկրում ընթացող գործընթացների մասին և հենց իրենց էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների բարձրագույն օրենսդրական մարմնում լինելու փաստը շատ հաճախ ձևական բնույթ է կրում:

Թույլ քաղաքական ներգրավվածությունը ևս մեկ պատճառ է քաղաքական կուսակցությունների պասիվության համար: Քաղաքական ենթակաները իր կուսակցական ծրագրերում էթնիկական փոքրամասնությունների համար կարևոր հարցերը մակերեսային են քննարկում կամ համապատասխան ուշադրություն չեն դարձնում: Նաև կուսակցությունները, որոնք էթնիկական

փոքրամասնություններով կուսակույտ շրջաններում են բնակեցված չունեն ուժեղ կուսակցական ենթակառուցվածք: Նրանք պոտենցիալ ընտրողների հետ կապ չունեն, իրենց չեն կարող տեղեկատվություն տրամադրել կուսակցության ծրագրի և հիմնական ստրատեգիաների մասին (Էթնիկականության և բազմամշակութաբանության ուսուցման կենտրոն, 2018):

Քաղաքական օտարման և բացառման գործընթացի մեջ հասկապես պետք է ուշագրավ լինի էթնիկական փոքրամասնությունների իգական ներկայացուցիչների վիճակը, քանի որ վրացական հասարակությունը կանանց քաղաքական մասնակցությանը ցածր ցուցանիշով է բնութագրում, ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակին (Միավորված ազգերի կազմակերպության կանանց կազմակերպություն, 2014): Այդ ֆոնին, նույնիսկ ավելի ցածր է էթնիկական ոչ վրացի կանանց քաղաքական գործունեությունը: Դրան որոշակի չափով, օգնում է նաև քաղաքական համակարգը: Ըստ գործող օրենսդրության, Վրաստանի խորհրդարանի և տեղական ինքնակառավարմանը ձևավորում է կատարվում, այսպես կոչված խառը (Համամասնական-մեծամասնական) ընտրական համակարգի հիման վրա: Պրակտիկայում գոյություն ունի որոշակի փոխկապակցություն ընտրական համակարգի և կանանց քաղաքականության մեջ ներկայացուցչության միջև: Համակարգի տեսակները հաճախակի դեպքում էական ազդեցություն է ունենում կանանց ներկայացուցչության վրա: Երկիրները, որտեղ գործում են համամասնական ընտրական համակարգը, քաղաքականության մեջ կանանց ներկայացուցչության կողմից շատ ավելի առաջ է այն երկրներից, որտեղ էլ մեծամասնական համակարգ է ներդրվել (United Nations, 2005):

Այսպիսով, էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքական կյանքի թույլ մասնակցության պատճառները տարբեր են և նրանց հետազոտությունը կարևոր է: Անհրաժեշտ է անմիջականորեն էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների հեռանկարի խնդիրների վերլուծությունը, ինչպես նաև քաղաքական մասնակցության ինստիտուցիոնալ արգելքների ուսումնասիրությունը: Համապատասխանորեն, կարևոր է ոչ միայն միկրո, այլև մակրո գործոնների վրա համակենտրոնացումը, որպեսզի կատարյալ լինի էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքական մասնակցության բոլոր ցուցանիշի նույնականացումը, թիրախային խմբերից և շրջանների առանձնահատկություններից ելնելով:

## 2. Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության **նպատակը** էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքական կյանքում ներգրավման հետազոտություն էր, հասկապես շեշտադրելով էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչ՝ կանանց քաղաքական մասնակցության մասին:

Հետազոտության նպատակներին հասնելու համար սահմանվել են հետևյալ առաջադրանքների իրականացումը.

- Երկրորդական տվյալների վերլուծությունը, այսպես կոչված սեղանային հետազոտություն է, որն էլ ներառված էր պետական քաղաքականության փաստաթղթերի, վիճակագրության ազգային աշխատանքի տվյալների, ուրիշ ոչ կառավարական և միջազգային

կազմակերպությունների կողմից իրականացվող հետազոտությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը,

- Էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքական կյանքում մասնակցության հիմնական բնութագրերի և ցուցանիշների բացահայտումը, որակական սոցիոլոգիական հետազոտության (Ֆոկուս խմբերի) միջոցով;
- Քանակական հետազոտական գործիքի մշակումը, որն էլ չափում էր էթնիկական փոքրամասնությունների քաղաքական մասնակցության պայմանական գործոները և մոտիվատորները,
- Էթնիկական փոքրամասնությունների քաղաքական մասնակցության մասին մասայական հարցաքննության անցկացում՝ Սամցխե Չավախեթիում, Քվեմո Քարթլիում, Կախեթիում, Թբիլիսիում և Բաթումում:
- Համախմբված վերլուծական հաշվետվության մշակումը վրացերեն, անգլերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, որոնց մեջ ներկայացված կլինեն ինչպես շրջաններում ապրող բնակչության կախվածությունները (Քանակական հետազոտության արդյունքները), այնպես էլ երկրորդական տվյալների վերլուծության հետևանքով հայտնաբերված բացահայտումները,
- Այսպես կոչված վորքշոպի անցկացումը փորձագետների հետ, քաղաքական կուսակցության ներկայացուցիչների հետ, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որտեղ էլ նրանք կձանոթանան հետազոտության արդյունքներին և քննարկումը տեղի կունենար, ինչն էլ քաղաքականության փաստաթղթի ստեղծմանը կօգներ;
- Անցկացրած հետազոտությանը և այսպես կոչված վորքշոպին հենվելով, քաղաքականության փաստաթղթի ստեղծում վրացերեն, անգլերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Հետազոտության նպատակն է և առաջադրանքներին հասնելու համար օգտագործեցին սոցիոլոգիական հետազոտության ինչպես *որակական*, այնպես էլ *քանակական* մեթոդները:

## 2.1 Որակական հետազոտություն

Հետազոտության սահմաններում օգտագործվել են երկրորդական տվյալների վերլուծության մեթոդը, այսպես կոչված **"Մեդանային հետազոտություն"**-ը, որն էլ ներառել էր գոյություն ունեցող պաշտոնական վիճակագրական տեղեկությունները, այն հետազոտությունների և փաստաթղթերի վերլուծությունը, որոնք էլ էթնիկական փոքրամասնություններին քաղաքականության մեջ ներգրավվելու հարցերին է վերաբերվում:

Բացի այդ, որակական հետազոտությունը, **Ֆոկուս խմբի** մեթոդով, անցկացվեց Սամցխե-Չավախեթի, Քվեմո Քարթլի, Կախեթի (Պանկիսի կիրճը, Կախեթիի ադրբեջանական գյուղերը), Թբիլիսիի էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքական կյանքում մասնակցության փոփոխականների և ցուցանիշներ բացահայտելու համար (Այսինքն, որակական հետազոտությունը ուներ քանակական հետազոտությանը օգնող ֆունկցիա): Մասնավորապես, այս նպատակով տեղի ունեցավ 9 Ֆոկուս խումբ. Սամցխե-Չավախեթի, Քվեմո Քարթլի, Կախեթիի շրջաններում (Օսերի և քիստերի բնակավայրերում) 2-2 և Թբիլիսիում՝ 1, որտեղ էլ մասնակցեցին տարբեր էթնիկական

փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Յուրաքանչյուր Ֆոկուս խմբի մասնակիցների քանակը կազմում է 7-8 մարդ, իսկ նրանց հավաքագրելու ժամանակ պաշտպանված էր գենդերային և տարիքային հավասարակշռությունը: Խմբային քննարկումները տեղի ունեցան ինչպես քաղաքի (5 խմբային քննարկումներ), այնպես էլ գյուղի տիպի բնակավայրերում (4 խմբային քննարկումներ):

Ֆոկուս խմբի ուղեցույցը ներառում էր բաց կամ կիսափակ հարցերի վերանայման թեմաների շուրջը: Ուղեցույցը բաղկացած էր 15-20 հիմնական հարցերից, այնուամենայնիվ, քննարկումների ընթացքում քննարկվելիք հարցերի համատեքստում լրացուցիչ հարցեր են լսվել, քանի որ այդ մեթոդը օգտագործելու գործառնությունը նոր հարցերի և ասպեկտների շեշտումն էր: Կարևոր էր այն, որ Ֆոկուս խմբերի միջոցով կբացահայտվեր այն ունիվերսալ հարցերը, որոնք էլ բոլոր էթնիկական փոքրամասնությունների խմբերի համար կլինեն ռելեվանտ, նաև նրանք որոնք էլ միայն կունկրեստ խմբերի համար կլինեն ակտուալ: Քննարկումների քայլը ձայնագրված են վիդեո և աուդիո ֆայլերով:

## 2.2 Քանակական հետազոտություն

Քանակական հետազոտության թիրախային խմբերին էին ներկայացնում. Մամցխե-Ջավախեթի (Հայեր), Քվեմո Քարթլի (Ադրբեջանցիներ), Կախեթի շրջանի (Պանկիսի քիստեր, օսեր), Թբիլիսիի (Եզդիներ, գնչուներ և ռուսներ), Բաթումի (Ռուսներ) էթնիկական փոքրամասնությունների 18 տարեկանից բարձր ներկայացուցիչները,

**Ընտրանքի չափը.** 1314 պատասխանող

Ըստ նշված ընտրանքի չափի, հետազոտության արդյունքները ռեպրեզենտատիվ են Վրաստանի էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների համար 2.7%-անոցը ընտրության սխալներով և 95%-անոցը վստահելիության ընդմիջումով: Տվյալները, նաև ռեպրեզենտատիվ են գենդերային կրճատման համար, կանանց դեպքում 3.7%-անոց է, իսկ տղամարդկանց դեպքում 4%-անոց սխալներով: Պետք է նշել, որ էթնիկապես հայը, ադրբեջանցին, քիստը, օսը և քաղաքի տիպի բնակավայրերում ապրող փոքր էթնիկական (Ռուսներ, գնչուներ, քրդեր/եզդիներ) խմբերի համար արդյունքները ռեպրեզենտատիվ են 6%-անոց սխալներով (95%-անոց) (Տես աղյուսակ #1-ը):

### Աղյուսակ N1

	Էթնիկական փոքրամասնությունների խումբը	Բնակավայրը	Դեմ առ դեմ հարցազրույցների քանակը	Ընտրության փորձը (95%-ոց վստահության համար)
1.	Հայեր	Մամցխե-Ջավախեթի	268	6%
2.	Ադրբեջանցիներ	Քվեմո Քարթլի	267	6%
3.	Քիստեր	Պանկիսի կիրճ	264	6%
4.	Օսեր	Լագոդեխի մունիցիպալիտետ	244	6%
5.	Ռուսներ/քրդեր/եզդիներ և	Բաթումի և Թբիլիսի	271	5.9%

գնչուններ			
<b>Ընդամենը</b>		<b>1314</b>	<b>2.7%</b>

**Հետազոտական գործիքը.** Ձևավորված հարցաթերթիկ;

**Հարցման մեթոդը.** դեմ առ դեմ հարցազրույց;

**Ընտրության շրջանակը.** Վրաստանի վիճակագրության ազգային աշխատանքի կողմից անցկացրած բնակչության մարդահամարի (2014) վիճակագրական տվյալները,

**Ընտրության դիզայնը.** Ընտրության մոդելները ըստ էթնիկական փոքրամասնությունների բնակավայրի առանձնահատկությունների էին տարբերվում:

1. Սամցխե-Չավախեթիում էթնիկապես **հայ** և Քվեմո Քարթլիում **ադրբեջանական** բնակչության ուսումնասիրելու համար օգտագործվել է բազմաստիճան ստրատիֆիկացված (Կլաստեր) ընտրություն,

Ստրատիֆիկացումը իրականացվել է տարածքային միավորներին համապատասխանաբար, որոնցից են.

Ա) Քաղաքի և գյուղի բնակավայրերը

Բ) Թիրախային շրջաններում ներառված վարչական շրջանները

**Կլաստերներին** (Նույնը, ընտրության միավորներին) ներկայացնում էր ընտրատեղամասերը, որոնք էլ սահմանված էին ինչպես քաղաքների համար (Ուրբան տարածքային միավորների համար) այնպես էլ գյուղերի համար (Ինքը գյուղն է ներկայացնում ընտրատեղամասը): Կլաստերացման ընթացքում սահմանված է առաջնական, երկրորդական և վերջնական ընտրության միավորներ.

**Առաջնական ընտրության միավորը (PSU):** Ընտրատեղամասերը քաղաքի և գյուղի տիպի բնակավայրերում,

**Երկրորդական ընտրության միավորը (SSU):** Տնային տնտեսություն (Ընտանիք): Յուրաքանչյուր առաջնական ընտրության միավորի մեջ **SSU**-ների ընտրությունը իրականացվեց այսպես կոչված «Պատահական թափառման» մեթոդով: Հարցազրուցավարը ընտրում էր սկզբնական կետը/ընտանիքը, որը կոնկրետ հասցեով էր ներկայացված: Այս հասցեից սկսում էր նա շարժվել և յուրաքանչյուր հաջորդ ընտանիքը ընտրում էր որոշակի ընդմիջումներով: Եթե հարցազրուցավարը պատասխանողներից որևէ մեկին տանը չէր գտնում, ապա նա մտապահում էր հասցեն և քիչ ավելի ուշ էր վերադարձնում այդ ընտանիք: Միայն երկու անհաջող այցից հետո հարցազրուցավարը հասցեի փոխարինումն էր կատարում,

**Վերջնական ընտրության միավորը (FSU):** 18 և 18 տարեկանից բարձր անհատներ: Վերջնական միավորի ընտրությունը կատարվեց ընտանիքներում, ընտանիքի անդամների միջև, պատահական օրենքով այսպես կոչված "Կիշի աղյուսակը" (Kish Table) օգտագործելով:

2. **Քիստերի** և **օստերի** դեպքում ընտրության դիզայնը տարբերվում էր: Քանի որ այդ խմբերը միայն մի քանի կոնկրետ գյուղերում են ապրում, համապատասխանորեն, նպատակահարված (Այսինքն, առանց

հավանական ընտրության հիման վրա) կատարվեց նրանց բնակավայրերի ընտրությունը: Հետազոտությունը ներառել է այս խմբերի բոլոր բնակելի գյուղերը: Նախորդ ընտրության մոդելին նմանապես, երկրորդական և վերջնական ընտրության միավորները այս դեպքում էլ նույն էին, նույն սկզբունքներով էր պատասխանողների ռեկրուտացումը:

3. Թբիլիսիում և Բաթումում **ռուսի** և **քրդի/եզդու կամ գնչուների** խմբերի դեպքում ընտրության մոդելը տարբերվում էր, քանի որ այս մարդիկ կոնկրետ տեղամասերում կոմպակտ չեն ապրում: Մասնավորապես, պատասխանողների ռեկրուտացումը կատարվել է "Ձնագունդ" մեթոդը օգտագործելով, 18 և 18 տարեկանից բարձր տարիքի անձանց գտնելով:

Հետազոտության գործիքը. Հետազոտության գործիքը կմշակվի ֆոկուս-խմբերի կազմակերպության արդյունքում բացահայտված ցուցանիշների, նաև երկրորդական տվյալների վերլուծության հետևանքով շեշտված համատեքստի հիման վրա: Հարցաթերթիկը կազմելուց հետո անցկացվեց հետազոտության գործիքի պիլոտաժ: Հարցաթերթիկի պիլոտացման փուլին անցկացվեցին 15 դեմ առ դեմ հարցազրույցներ: Պիլոտաժի նպատակն էր հարցերի միջև տրամաբանական կապերի վերանայումը, նաև այս կամ այն հարցի ռելեվանտի ստուգումը: Բացահայտված յուրահատկությունները արտացոլվեց հարցաթերթիկի մեջ և ավարտված հարցաթերթիկը ինտեգրվեց պլանշետային համակարգչի մեջ, ODK (Open Data Kit) ծրագրի մեջ:

**Դաշտային աշխատանքներ.** Մինչև դաշտային աշխատանքները սկսելը վերահսկողների և հարցազրուցավարների համար տրենինգներ են անցկացվել, որտեղ նրանց տրվեց մանրամասն հրահանգներ հետազոտության գործողության առանձնահատկությունների հետ կապված: Հետազոտությունը 6 վերահսկողների և մինչև 30 հարցազրուցավարների միջոցով է իրականացվել: Դաշտային աշխատանքները սկսվել են 2018 թվականի հոկտեմբերի 9-ին և ավարտվել են հոկտեմբերի 20-ին:

**Դաշտային աշխատանքների հսկողությունը.** Դաշտային աշխատանքներին զուգահեռ իրականացվում է դաշտային աշխատանքների հսկողությունը: Դաշտային հսկողությունը անցեկացվել ընտրովի համադրության հարցաթերթիկների 10%-ին (130 հարցազրույց):

### **Տվյալների վերլուծություն.**

Տվյալների վերլուծության պատրաստման փուլում կատարվեց տվյալների մաքրումը և կշռումը: Ըստ սեռի և տարիքի տվյալների ընդհանուր ամբողջականության կշռում իրականացվեց: Հետազոտության տվյալները վերլուծվեցին ծրագրերի մեջ. SPSS և Statistics R/R Studio: Տվյալների վերլուծությունը իրականացվեց հետևյալ մեթոդը օգտագործելով. Միաչափ հաճախականության բաշխում, խաչ աղյուսակավորումներ, հարաբերակցություն, ռեգրեսիա և այլն: Հետազոտության արդյունքների հետ կապված, նաև վերանայվեց Կովկասյան բարոմետրի 2017 թվականի տվյալները<sup>1</sup>: 2017 թվականի նշված հարցազրույցը ամբողջ Վրաստանի մասշտաբով ներառում էր 2379 պատասխանող: Համապատասխանաբար, այն տալիս էր երկրում գոյություն ունեցող սոցիալական, քաղաքական և

<sup>1</sup> Կովկասյան բարոմետր Վրաստան - <https://caucasusbarometer.org/ge/>



տնտեսական միտումները տեսնելու հնարավորությունը, ինչը հետաքրքիր է էթնիկական փոքրամասնությունների խմբերի հետազոտության արդյունքների համեմատական վերլուծության համար:

**Քաղաքական փաստաթուղթ.** Հետազոտության արդյունքներին և առաջարկություններին հենվելով մշակվեց քաղաքական փաստաթուղթը (Policy Paper), որտեղ էլ ներկայացրած է ինտերվեյսայի այնպիսի մոդելներ, որոնք էլ կօգնեն էթնիկական փոքրամասնությունների խմբերին և նրանց ներկայացուցիչների քաղաքական գործընթացներում բարձրացնել մասնակցության քանակը:

### 3. Գրականության վերանայումը

«Որտեղ մարդկանց փոքր մասն է մասնակցում գործընթացում որոշումներ կայացնելու համար, այնտեղ լինում է փոքր ժողովրդավարություն, իսկ ինչքան ավել մարդ ներգրավված կլինի այս գործընթացներին այնքան ավելի բարձր կլինի ժողովրդավարության որակը» (Verba & Nie, 1972, էջ 1): Ժողովրդավարությունը ինկլյուզիվ տեսակի կառավարական են համարում, քանի որ նա ի նկատի ունի «ժողովրդի կառավարումը, որն էլ իրականանում է ժողովրդի կողմից և կրկին ժողովրդի համար է, ինչպես էլ բոլորի համար» (Taylor, 1998, էջ 144): Ինկլյուզիվ-ացումը ի նկատի ունի փոքրամասնություն խմբերի քաղաքական գործընթացներում մասնակցությունը, ինչի իրական հնարավորություններն էլ ժողովրդավարության պայմաններում պետք է լինի ապահովված: Ժողովրդավարության իրականացումը կոնկրետ բարդություններ ունի և կարևոր մարտահրավերները տարբեր քաղաքական մշակույթների թե ինքնություն ունեցող խմբերի հասկացողության և կառավարման մեջ նրանց ներգրավվածն տեսանկյունից է դրսևորվում: Սակայն, ներգրավվածն նախապայմանը դեռ այս խմբերի նույնականացումն է ու ճանաչումը (Taylor, 1998): Այն պետք է նշել, որ ժողովրդավարության իդեալական տեսակի ժամանակակից պրակտիկայում կարևոր խախտումներով է իրականանում: Ժամանակակից ժողովրդավարությունները բնութագրվում են մշտական լարվածությամբ տարբեր խմբերի ինկլյուզիվ-ացման և բացառված դիմամիկայի միջև (Taylor, 1998; Taylor, 2001): Ավելին, հեղինակները խոսում են մի շարք երկրներում ժողովրդավարական ինստիտուտներ գոյություն ունելու մասին և քննադատում են կոնսոցիալիզմի<sup>2</sup> (consociationalism) սկզբունքը, որն էլ նրանց կարծիքով մակերեսային է և դիմակով է փակում իրականությունը, կարծես թե էթնիկական փոքրամասնությունների կարիքները հաշվի էին առնում և ինտերգրացում էր կատարվում քաղաքականության մեջ այն ֆոնին, երբոր էլ պրակտիկայում փոքր խմբերի հետաքրքրությունները/կարիքները մնում են քաղաքականությունից դուրս (Lijphart, 1969; Kohli, 2014): Ենթադրվում է, որ իրականում «Գոյություն ունեցող ժողովրդավարական երկրներում սոցիալական, տնտեսական և քաղաքական անհավասարության ուժեղացումն է ընթանում, ինչն էլ իշխանություն ունեցող անձանց/խմբերին հնարավորություն է տալիս ձևականորեն ժողովրդավարական գործընթացները օգտագործեն անարդարություն հաստատելու համար թե արտոնություններ պահպանելու համար» (Young, 2000, էջ 17):

<sup>2</sup> Կոնսոցիալիզմի<sup>2</sup> այնպիսի տիպի ժողովրդավարական համակարգ է առաջարկում, որն էլ հիմնված է տարբեր սոցիալական խմբերի էլիտայի անդամների կառավարության և իշխանության նրանց միջև կիսելու մասին: Աղբյուր՝ <https://www.britannica.com/topic/consociationalism>

Ժամանակակից հասարակության մեջ տարբեր խմբերի գոյությունը անշրջելի կամ ցանկալի գործընթաց է: Նրանց ինքնության հանդեպ մոտեցումները քաղաքական են և անհրաժեշտ է, որ ժամանակակից քաղաքականությունը հիմնված լինի տարբեր հասկացողությունների վրա, որն էլ շեշտում է յուրաքանչյուր խմբի ինքնությունը, ինչպես նաև հատկապես և նկատի չունի դոմինանտ ինքնության հետ նրանց ձուլումը (Taylor, 1994): Պետության մեջ կարևոր է «Տարբերությունների քաղաքականության» (Politics of difference) անցկացումը, որն էլ ի նկատի ունի տարբեր խմբերի ճանաչումը և կառուցվածքային պայմանավորվածության մեջ ինտերգրումը: Սակայն, պետական քաղաքականությունը միայն խմբերի և նրանց ինքնությունը ճանաչելու համար չպետք է դադարի, հարկավոր է, որ էթնիկական փոքրամասնությունների խմբերի հանդեպ քաղաքական մոտեցումներով դուրս գալ արդարության, հավասար հնարավորությունների և քաղաքական ինկլյուզիայի սկզբունքներից (Young, 2000, էջ 107): Հարկավոր է հոմոգեն քաղաքացիության հայցեկարգի ու մոտեցման ճանաչման և քաղաքացիների միջև տարբերությունների հավասարաչափության քաղաքականության համար որպես հիմք դնել (Young, 1990): Սակայն, երբ հասարակությունը ունի արտոնյալ դոմինանտ խումբ, միշտ էլ գոյություն ունի այն վտանգը, որ հավասարության մոտեցումը հնարավոր կլինի դոմինանտ խմբերի կողմը թեքվելու:

Բանն այն է, որ «Դոմինանտ խմբերը բնութագրվում են դեպի հեգեմոնիայի ձգտմանը և ուրիշ խմբերին զցել իրենց ազդեցության տակ», (Taylor, 1994, էջ 66): Այդ պատճառով, կարևոր է պետության մեջ հավասար ինքնություն ճանաչելու քաղաքականություն անցկացնելը, որն էլ արդարության և արժեքների հավասարակշռության վրա կլինի հիմնավորված (Taylor, 1992), նաև անհրաժեշտ է այս խմբերի համար ընդհանուր հարցերի հասանելիությունը և նպաստել քաղաքական մասնակցությունը:

Երկրում ժողովրդավարության իրականացման անհրաժեշտ պայմաններից մեկն է քաղաքացիների քաղաքական ներգրավվածությունը: Ընդհանուր առմամբ, մասնակցությունը ի նկատի ունի քաղաքացիների այն տիպի ակտիվացումը, որն էլ քաղաքականի վրա ազդեցություն ունի: Քաղաքական մասնակցության/ներգրավման մեկ համապարփակ բացատրություն փնտրելը դժվար է, քանի որ հեղինակները այս հասկացությունը միմյանցից տարբերվող օպերացիոնալիզացիա են կատարում (Conge, 1988; Brady, 1998; van Deth, 2001; Fox, 2013.): Քաղաքական մասնակցության բացատրությունները տատանվում են քաղաքացիների անհատական մասնակիցների և սոցիալական շարժման մոբիլիզացման միջև: Այս բացատրությունները սկսվում են քաղաքացիների գործողությամբ հանրային դաշտում, փոքր, ոչ համակարգային փոփոխությունների կատարման նպատակով (Verba & Nie, 1972), և ավարտվում է ավելի լայն հասկացողությամբ, ինչպես քաղաքացիների ուժը ցուցադրելով, որն էլ իշխանություն ունեցող կառույցների վրա ազդեցություն ունենալու նպատակն է (Arnstein, 1969): Հարկ է նշել, որ տեխնոլոգիաների և քաղաքացիական հասարակության զարգացման հետ միասին, աճում են քաղաքականության ներգրավման ձևերը և նրանց քանակը: Ինտերնետի դերը կարևոր է, որն էլ ընդլայնեց հնարավորությունները սոցիալական մոբիլիզացիայի համար, ինչն էլ, շատ դեպքերում, քաղաքական մասնակցության կարևոր նախապայման է (Bennett & Segerberg, 2013): Այսօր հետազոտողները մարտահրավերների դեմ են կանգնում, թե որ ակտիվացումը համարեն քաղաքական և որը ոչ քաղաքական: Օրինակ, այգեգործությունը կամ որևէ բրենդային ապրանքը դիտավորյալ չօգտագործել քաղաքական մասնակցության ավանդական տեսակներին չեն պատկանում, սակայն

նպատակը կարող է քաղաքական լինել, այսպիսով համարենք թե ոչ, որպես քաղաքական ներգրավվածություն (van Deth, 2014): Սակայն, ընթացիկ հետազոտությունը էթնիկական փոքրամասնությունների խմբերի քաղաքական մասնակցության ավելի ավանդական ձևերի ուսումնասիրություն է ներառում և ֆոկուս-ացվում են այսպիսի դեմքերի վրա, ինչպիսին են. մասնակցությունը ընտրություններին, քաղաքական անդամ լինելը, մասնակցությունը տեղական ինքնակառավարման իրականացման մեջ և այլն:

Մանդելը (Sandel, 1996) դիմում է քաղաքական խմբերին/համայքներին և քաղաքացիներին նրանց, ովքեր էլ ընդհանուր հարցերի համար կարող են մոբիլիզանալ: Ընդհանուր բարիքների համար մոբիլիզացումը թե որոշումների մեջ մասնակցելու համար ժողովրդավարական համատեքստի գոյություն է հարկավոր, ինչը պետք է արտահայտված լինի համայքի և հարևանների մակարդակին գոյություն ունեցող ժողովրդավարական շրջապատում: Տեղական ժողովրդավարության զարգացումը մշակութային և քաղաքականության փոքր խմբերի համար որոշակի ինքնավարություն տալով պետք է կատարվի, որն էլ, ինչ խոսք պետք է լինի ամրացված պետության մակարդակի ժողովրդավարությամբ: Հանրային գործընթացներում մասնակցության հիմնարար օղակը ինքնակառավարությունների ֆունկցիոնալումն է, որն էլ սոցիալական միասնության բոլոր անդամներին կառավարության մեջ մասնակցելու հնարավորություն է տալիս (Sandel, 2004): Հարևանների և համայքային ինստիտուցիաները ուժեղացնելու ճանապարհով, տարբերվող խմբերին, նրանց միջև էթնիկական փոքրամասնություններին, թե տարբերություններով թե անհրաժեշտություններով ավելի լավ կկարողանան իրենց ցուցադրել (Young, 2000):

Ընդհանուր առմամբ, ժողովրդավարական քաղաքական մասնակցությունը ինչպես գործիքային, այնպես էլ իր սեփական արժեքն ունի (Young, 1995): Գործիքային արժեքը այն է ցույց տալիս, թե որ մարզինալացված և խոցելի խմբերը քաղաքական գործընթացների մեջ մասնակցելու հնարավորություն կունենան, հանրային տարածությունը հետերոգեն կդառնան: Մասնակից ժողովրդավարությունը հենց այդ խմբերին պետք է տա հանրային քաղաքականության մեջ կառավարական կառույցներին թե աշխատավայրում որոշումների մեջ ներգրավման երաշխիքը (Young, 2000): Իսկ տարբերվող խմբերի արտահայտման յուրահատուկ արժեքները բացահայտվում են նրանով, որ «Նա մեզ օգնում է այն երկրի իրականության և օբյեկտիվության բացահայտմանը, որտեղ էլ ապրում են այս խմբերը» (Young, 2000, էջ 112):

Կարևոր է քննարկել ինքնության երևույթը էթնիկական փոքրամասնությունների մոբիլիզացման թե նրանց ներկայացուցիչների քաղաքական ակտիվությունը: Սոցիալական միասնության մեջ անհատներն ունեն իրենց ինքնությունը և ունեն «Եսը» (“self”), որն էլ դա անհատների կողմից ընտրությունը մակերեսային չէ և նա խորը, սոցիումի մեջ արմատացած հիմք ունի (Sandel, 1982): Ըստ Կասֆիրի (Kasfir, 1979) էթնիկ ինքնություն էլ, նույնպես ինչպես այլ ինքնությունները, կարող են դառնալ քաղաքական գործունեության իրականացման մոտիվացիայի աղբյուրը: Սակայն, էթնիկության հիման վրա առաջացած քաղաքական մասնակցությունը անհրաժեշտաբար սահմանված է օբյեկտիվ ցուցանիշներով, որոնցից են օրինակ՝ լեզուն, տարածքը, մշակույթը և այլն: Քաղաքական մասնակցության համար օբյեկտիվ գործոններից ավելի կարևոր անհատների սուբյեկտիվ ընկալումներն են, որպեսզի ներգրավված լինեն այս կամ այն քաղաքական ակտիվության մեջ: Նրա համար, որ


քաղաքական ակտիվության մեջ ձևավորում և արտիկուլացիա կատարվի, հարկավոր է քաղաքական միջավայրում կոնկրետ հնարավորությունների և քաղաքական իրավիճակի առկայությունը: Չնայած այն, էթնիկական ինքնությունը համարում են օբյեկտիվ կամ սուբյեկտիվ, երկուսն էլ կարևոր նախապայման է վերլուծության համար: Ըստ Կասֆիրի (Kasfir, 1979), մի կողմից կարևոր է սուբյեկտիվ ընկալման վերլուծությունը, այսինքն այն թե ինչպես կընկալի անհատը ինքն իրեն էթնիկական խմբի նկատմամբ, իսկ երկրորդ կողմից հարկ է ուշադրություն դարձնել օբյեկտիվ ցուցանիշների (Կրթությունը, զբաղվածությունը, եկամուտը և այլն) քննարկմանը: Հարկ է նշել տարբերությունը էթնիկական ինքնության ձևական և ոչ ձևական ճանաչման միջև (Nagel, 1994): Այնուհետև, երբ էլ անհատների կողմից իրենց էթնիկականության ոչ ձևականությունը հիմնականում նրանց ամենօրյա պրակտիկայում է արտահայտվում, ձևական էթնիկական պիտակը և քաղաքականությունը էլ ավելի ուժեղ աղբյուր է ինքնության ձևավորման համար, սոցիալական փորձառության և քաղաքական ակտիվության համար: Կարևոր է այն քաղաքական ֆոնը և քաղաքական մոտեցումները, որոնց միջոցով էլ էթնիկական խմբերի սահմանների և էթնիկական ինքնության պատերների որոշումն է կատարվում: Նագելը (Nagel, 1986) համարում է, որ էթնիկականությունը և էթնիկական ինքնությունը «Քաղաքականորեն կառուցված է», քանի որ պետությունն է այն դոմինանտ ինստիտուցիան, որն էլ սահմանում է քաղաքականությունը, էթնիկական թե սոցիալական գործընթացները, որոնք էլ ինքստիքյան ներառում են նաև էթնիկական փոքրամասնությունների խմբերը: Պետության դերը կապված է ինչպես իր կողմից էթնիկական փոքրամասնությունների խմբերի նկատմամբ մոտեցման և էթնիկականության հետ կապված քաղաքականության բովանդակության հետ, նաև այս խմբի կողմից սոցիալական նպաստների մատչելիության հետ:

#### 4. Երկրորդական տվյալների վերլուծությունը

##### Ներածություն

Վրաստանը բազմամշակութային պետություն է, որտեղ էլ ավանդաբար ապրում են տարբեր էթնիկական, լեզվաբանական թե կրոնական բնույթ ունեցող էթնոսներ և մշակութային խմբեր: Երկրի էթնիկական կազմը տարիների ընթացքում անընդհատ փոխակերպվում է: Էթնիկական վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ սուր հոմոգենացման միտումը նշվում է և էթնիկական բազմազանությունը կորում է ժամանակի ընթացքում:

**Դիագրամ 1. Վրաստանի բնակչության էթնիկական կազմի դինամիկան (Աղբյուր. էթնիկականության և բազմամշակութայնության ուսուցման կենտրոն)**



Ըստ բնակչության վերջին մարդահամարին, որն էլ 2014 թվականին անցկացվեց բնակչության ընդհանուր քանակության մոտավորապես 13.2 տոկոսը պատկանում էր էթնիկական փոքրամասնությանը<sup>3</sup>, նրանց միջև քանակությամբ ամենախոշոր խմբերն են ներկայացնում ադրբեջանցիները (6.2 տոկոս) և հայերը (4.5 տոկոս), որոնք էլ կոմպակտ են ներկայացված երկրի Հարավային շրջաններում (Քվեմո-Քարթլի և Սամցխե-Ջավախեթի շրջանները), մնացած էթնիկական խմբերը ավելի քիչ են ստեղծում կոմպակտ բնակավայրեր և բնակված են տարբեր շրջաններում և ուրբան կենտրոններում: Երկրում էթնիկական փոքրամասնությունները և մշակութապես բազմազան համայքների գոյությունը վերածվեց կարևոր մարտահրավերներից մեկը Վրաստանի կառավարության համար, գլխավոր մարտահրավերը կայանում է համարժեք և արդյունավետ քաղաքացիական ինտեգրման քաղաքականությանը հետևելով: Այս քաղաքականության վրա կախված է այն կարևորությամբ, թե ինչպես կկարողանա վրաց քաղաքական օրգանիզմի ներգրավվածության, համագործակցության և բազմակարծության վրա հիմնված պետության ձևավորումը:

**Էթնիկական փոքրամասնությունների կառավարման և քաղաքացիական ինտեգրման քաղաքականության խստիտուցիոնալ շրջանակի ձևավորում**

Ազգային փոքրամասնությունների պաշտպանման և արդյունավետ քաղաքացիական ինտեգրման քաղաքականության իրականացման համար գլխավորապես կարևոր է ճիշտ ինստիտուցիոնալ մեխանիզմի գոյությունը: Նշված մեխանիզմը և ինստիտուցիոնալ շրջանակը վերջին տարիների ընթացքում բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել, ինչը ազդեցություն էր ունենում

<sup>3</sup> Սաքստատի բնակչության պաշտոնական մարդահամարի տվյալները [www.geostat.ge](http://www.geostat.ge)

ինտեգրացիայի ընդհանուր քաղաքականության կայունության և արդյունավետության վրա: Առաջին կարևոր համակարգային քայլերը այս ուղղությամբ դրվեց 2015 թվականին, երբ որ կառավարության մեջ ստեղծվեց քաղաքացիական ինտեգրացիայի հարցերի մեջ պետական նախարարի գրասենյակը: Որպես պետական նախարար ծագումով և ազգությամբ օս` Զինաիդա Բեստաեվան էր նշանակված: Այս նշանակումը կառավարության կողմից ազգային համաձայնության հարցերի մեջ դրված քայլն էր, նաև օսերի և երկրում ապրող բոլոր ոչ վրացի էթնիկական խմբերի ներկայացուցիչների հանդեպ բարի կամքի արտահայտում էր դրսևորվում: Նոր ստեղծած նախարարությանը պարտավորեցրեց քաղաքացիական ինտեգրացիայի և էթնիկական փոքրամասնությունների ներգրավվածության քաղաքականության մշակումը և իրականացումը, իր լիազորությունների մեջ նաև մտնում էր համապատասխան օրենսդրական շրջանակի կարգավորումը: Սակայն չնայած այդ լիազորություններին, ինչը առանց հակասելու հույս տվող քայլ էր կառավարության կողմից ինտեգրացիայի խնդիրների լուծման առումով, պետական նախարարի գրասենյակը չդարձավ որպես գործուն ու արդյունավետ մարմին, որն էլ ամբողջական համակարգում ցանկալի կլինեք ինտեգրացիայի քաղաքականությունը: Հիմնական պարտականությունները մանդատով հաշվի առնելու փոխարեն պետական նախարարի գրասենյակը հիմնականում գրաված էր 1990-ական թվականներին Հարավային Օսիայի և Վրաստանի ուրիշ տարածքներից ստիպված տեղահանված օսերի հարցը ուսումնասիրելու և նրանց վերադառնալու համար համապատասխան պայմանները ստեղծելը:

Ազգային փոքրամասնությունների ինտեգրացիայի առումով պետական նախարարի գրասենյակի անարդյունավետությունը մասամբ պայմանավորված էր իր նվազագույն ֆինանսավորմամբ (Տարեկան բյուջեն 200,000 լարի), մինևույն ժամանակ սահմանափակ ֆինանսավորման հնարավորություններից բացի պետական նախարարի գրասենյակի անհաջող գործունեությունը նրա մեծ մասամբ խորհրդանշական բնույթով էր բացահայտում, ինչը իրականում արտահայտվում էր միայն պետության տեսական պատրաստակամությամբ զբաղված լինելը էթնիկական փոքրամասնությունների խնդիրներով և ձեռք բերել փոքրամասնությունների բարյացակամությունը: Նախարարի պաշտոնին օս ազգության ներկայացուցչին նշանակելը այս առումով դրական դեր խաղաց, սակայն ի սկզբանե ակնհայտ էր, որ Զինաիդա Բեստաեվան, որն էլ քաղաքական կշիռ չի ունեցել չէր կարողանա առաջնորդել ինտեգրացիոն քաղաքականությունը և ստեղծել կայուն ինստիտուցիոնալ շրջանակ-մեխանիզմ: Ի վերջո գրասենյակը չեղյալ հայտարարվեց 2007 թվականի նոյեմբերին:

Պետական նախարարի գրասենյակը չեղյալ հայտարարելուց հետո էթնիկական փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրացիայի խնդիրը գործադիր իշխանության մեջ ոչ մի աշխատանքի պատասխանատվության տակ չի եղել մինչև 2008 թվականի հունիս ամիսը, քանի դեռ նշված թեմայի մասին պատասխանատվությունը նոր ավարտված ռեինտեգրացիայի հարցերում պետական նախարարի գրասենյակին չի պարտադրվել: Այս գործակալությունը ձևավորվել է 2008 թվականի փետրվար ամսին նախկին հակամարտությունների կարգավորման հարցերում պետական նախարարի գրասենյակի փոխարեն, որն էլ մինչև 2008 թվականի հունվար ամիսն էր ֆունկցիոնալ:

Ռեինտեգրացիայի հարցերում պետական նախարարի գրասենյակը ի տարբերություն իր նախկին կառուցվածքին շատ ավելի լայն մանդատով էր օգտվում էթնիկական փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրացիայի ուղղությամբ, ինչը գործակալության կառուցվածքային կազմակերպության մեջ արտացոլվեց: Նախարարության բազայի վրա հիմնադրվեց երկու վարչական

միավոր (Քաղաքացիական ինտեգրացիայի բաժին և էթնիկական փոքրամասնությունների հարցերի բաժին), որոնք էլ ուղղակի պատասխանատու էին մշակութային բազմազանության և ինտեգրացիայի քաղաքականության համար: Նախարարության գլխավոր նվաճումը պետք է համարել այն, որ դրվեց կարևոր միասնական քայլեր, պետական միասնական քաղաքականության վճռականությանը էթնիկական փոքրամասնությունների վերաբերյալ, մասնավորապես 2009 թվականին կառավարությունը ստացավ առաջին բոլորը ներառյալ փաստաթուղթը, որն էլ կարգավորում էր փոքրամասնությունների հանդեպ քաղաքականությունը և սահմանում էր պետության ինստիտուցիոնալ շրջանակը, նշված փաստաթուղթը ներակայացնում է կառավարության որոշումը «Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայցեկարգ» վերնագրով, որտեղ գրված են ընդհանուր կառավարական նպատակները և առաջադրանքները փոքրամասնությունների պաշտպանման և ինտեգրման ուղղությամբ, և նաև ինչը բոլորից կարևոր է մշակվել է հինգ տարվա կառավարական գործողությունների ծրագիրը, որտեղ էլ ըստ տարբեր գործակալությունների համապատասխան պատասխանատվությունների և պարտավորությունների բաժանվեց: Բացի այդ, պետական նախարարի գրասենյակի նախաձեռնությամբ և համակարգելով ձևավորվեց միջգերատեսչական կառավարական հանձնաժողովը, որն էլ միացնում է բոլոր ռելեվանտ նախարարությունն ու գործակալությունը այն նպատակով, որպեսզի ապահովված լինի գործողությունների ծրագրով նախատեսված գործունեությունների արդյունավետ կատարումը:

Էթնիկական փոքրամասնությունների պաշտպանման և քաղաքացիական ինտեգրացիայի ուղղությամբ ֆիքսացվել են որոշ փոփոխություններ 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանափոխությունից հետո: Փոփոխությունները անդրադարձավ փոքրամասնությունների հանդեպ գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կառավարման մեխանիզմներին: Փոփոխություն է ապրել նաև նշված ոլորտում ուղեկցող կառույցի անունը, ռեինտեգրման հարցերի մեջ պետական նախարարի գրասենյակի անունը վերանվանվեց և կոչվեց հաշտության ու քաղաքացիական հավասարության հարցերում պետական նախարարի գրասենյակ: Սակայն, չնայած անունի փոփոխությանը գոյություն ունեցող փոփոխությունները քաղաքականության և սկզբունքների մակարդակով էթնիկական փոքրամասնությունների ուղղությամբ չեն իրականացվել: Նոր կառավարությունը շարունակեց 2009 թվականի ստացած հայեցակարգով և գործողությունների ծրագրով նախատեսված գործունեությունների իրականացումը: Հայեցակարգի գործողության ժամկետը անցնելուց հետո էլ պետությունը 2015 թվականին ընդունել է որոշում հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային ստրատեգիայի և նոր հինգ տարվա ծրագրի ընդունման մասին: Բացի այդ պահպանված էր կառավարական միջգերատեսչական հանձնաժողովը, որի կազմը էլ ավելի լայնացավ, հանձնաժողովի հանդիպումների քանակն էլ դարձավ է ավելի ինտենսիվ: Պետության նոր տեսլական է ստրատեգիայի նպատակները, որը չորս հիմնական ուղղության շուրջն է միավորված. Հավասար և լիիրավ մասնակցությունը քաղաքացիական և քաղաքական կյանքի մեջ. Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծումը. Ապահովել որակյալ կրթության մատչելիությունը և բարելավել պետական լեզվի իմացությունը. Էթնիկական փոքրամասնությունների մշակույթի պահպանումը և հանդուրժողականության միջավայրի պաշտպանումը<sup>4</sup>: Ստրատեգիայի գործողության ծրագրի մեջ գրված է հինգ տարվա ընթացքում տարբեր

<sup>4</sup> Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ստրատեգիաները և 2015-2020 թթ. Գործողությունների ծրագիր, Վրաստանի կառավարություն 2015

կոնկրետ միջոցառումների ցանկը համապատասխան պատասխանատու գործակալությունները նշելով: Ստրատեգիայով նաև հաշվի է առնվել յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում հաջորդ տարվա ընթացքում իրականացված մեկ տարվա գործողությունների նաև ծրագրի մշակումը: Փաստաթուղթը նաև ձևակերպում է իրականացման հաշվետվությունները և գնահատման մեխանիզմները, ըստ որի էլ ամեն տարի պարտավորում է կատարել հաշվետվությունը, նաև նախատեսվում է միջանկյալ գնահատման փաստաթղթի մշակումը:

Հաստատված ռազմավարական փաստաթուղթը նախատեսում է ավելի շատ փոխազդեցություն մեծամասնության մոտ, քանի որ քաղաքացիական ինտեգրումը գործընթաց է, որտեղ էլ ներգրավված են ամբողջ հասարակությունը, նրա յուրաքանչյուր անդամը: Ստրատեգիայի կարևոր նորություն է ներկայացնում այնպիսի հարցերի նախատեսումը, ինչպիսին էլ են փոքր քանակի և խոցելի էթնիկ փոքրամասնությունների աջակցությունն է: Փաստաթղթով պետությունը կրում է պարտավորությունները, որը կապահովի փոքր քանակի և խոցելի էթնիկական խմբերի կրթական և իրավական անհրաժեշտությունները, նաև այս խմբերի լեզուների ուսուցման ներդրումը կրթական հաստատություններում: Ստրատեգիական ևս մեկ կարևոր նորություն է գենդերային ասպեկտների նախատեսումը: Մասնավորապես պետության պարտավորություն է ներկայացնում էթնիկական փոքրամասնություններին վերաբերվող կանանց իրավունքների պաշտպանումը, նաև նրանց անհրաժեշտությունների և ինտեգրացիայի ապահովումը:

Վրաստանի ներկայիս կառավարության գործունեության ժամանակ փոքրամասնությունների ինստիտուցիական կառավարման ոլորտում ընդունած կարևոր որոշումն էր քաղաքականության առանձնացումը էթնիկական փոքրամասնությունների և կրոնական փոքրամասնությունների միջև: Էթնիկական փոքրամասնությունների ինտեգրացիայի բաղադրիչները, ինչպես նշեցինք համակարգվում են պետական նախարարի գրասենյակի համաձայնության և քաղաքացիական հավասարության հարցերի մեջ, կառավարության այլ կառույցներն էլ հենց այս գործունեության համակարգման տակ են գործում: Ինչ վերաբերվում է կրոնական բազմազանությանը և կրոնական փոքրամասնությունների խնդիրին, այս ոլորտի վերահսկողությանը և համակարգմանը կրոնական հարցերի պետական գործակալությանը, որն էլ կառավարության կարգադրությամբ 2014 թվականին ստեղծեց և պարտավորվում է կառավարել պետության կրոնական քաղաքականությունը: 2015 թվականի ընթացքում գործակալության հիմնական գործունեությունը ներառում էր հետևյալ հարցերը. Միջկրոնական ներգրավվածության ապահովումը, կրոնական փոքրամասնությունների համար սովորական տոտալիտար ռեժիմի ժամանակ պատճառած վնասի մասամբ և սիմվոլիկ վարձատրության նպատակով ֆինանսական աջակցության իրականացումը, կրոնական փոքրամասնությունների համար կրոնական շինությունների փոխանցման հարցերի ուսումնասիրումը և համապատասխան որոշումներ ընդունելը:

Ինչպես տեսնում ենք, 2000-ական թվականներից մինչև այսօր փոքրամասնությունների ինստիտուցիական կառավարման քաղաքականության մեջ շատ փոփոխություններ են կատարվել: Մենք ունենք դեպի ինստիտուցիոնալ կայունությունը և արդյունավետությունը ուղենշված միտում և պարզ կառավարության տեսլական, ինչը արտացոլված է համապատասխան օրենսդրության և իրավական կանոնակարգերի մեջ: Նաև զգալիորեն բարելավվել է միջգերատեսչական համակարգումը



և համագործակցումը: Մակայն քաղաքականության արդյունավետության ազդեցություն է տալիս կառավարության կողմից համապատասխան քաղաքականության իրականացման մեջ սահմանափակված ֆինանսական ապահովումը: Էթնիկական փոքրամասնությունների պաշտպանման և քաղաքացիական ինտեգրացիայի քաղաքականության հայտարարման առաջնահերթությունը արտացոլված չէ պետական բյուջետային մակարդակին ֆինանսական ապահովման մեջ: Այնպես ինչպես նախորդ տարիների ընթացքում դեռևս բազմաթիվ պետական պարտավորությունների և պատասխանատվությունների կատարումը միջազգային աջակցությունից է կախված:

### **Էթնիկական փոքրամասնությունների քաղաքացիական և քաղաքական ներգրավման խնդիրները**

Նշված ուղղությամբ տարբեր արդյունքներ և միտումներ կարող ենք առանձնացնել եթե միմյանցից կբաժանենք քաղաքացիական և քաղաքական բաղադրիչների ոլորտը: Քաղաքացիական մասնակցության առումով վերջին տարիների պրակտիկան ցույց է տալիս, որ էթնիկական փոքրամասնությունները ունեն քաղաքացիական ցործընթացներում մասնակցության համարժեք հնարավորություններ, պետության կողմից նաև աջակցված է հաղորդակցությանը, խորհրդատվական և շահերի պաշտպանության ինստիտուցիոնալ մեխանիզմները, այս առումով պետք է նշել հանրային պաշտպանի գրասենյակի մոտ իրականացված խորհրդատվական կառույցի գոյությունը անվամբ էթնիկական փոքրամասնությունների խորհուրդ, որն էլ 2005 թվականից գործում է ինչպես կառավարության և էթնիկական փոքրամասնությունների միջև հաղորդակցական և խորհրդատվական ալիք: Խորհուրդը միացնում է էթնիկական փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները իրենց անդամների քանակից և աշխարհագրական դիրքից անկախ: Խորհուրդը նաև լիազորված է լույս հանել էթնիկական փոքրամասնությունների հետ կապված ցանկացած խնդիր և մշակել քաղաքական առաջարկությունները: Վերջին տարիներին խորհուրդի նպատակը ու մանդատը էլ ավելի շատ ընդլայնվեց և նա հազեցված է մոնիտորինգի և գնահատման ֆունկցիաներով, այս տեսանկյունից հատկապես կարևոր է խորհրդի տարեկան ներգրավվածությունը հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային ռազմավարության կատարման մոնիտորինգի իրականացման համար:

Էթնիկական փոքրամասնությունների քաղաքական ներգրավման տեսանկյունից նաև կարևոր մեխանիզմ գոյություն ունի տեղական ինքնակառավարման մակարդակին, մասնավորապես 2016 թվականին հաստատած կառավարության գործողությունների ծրագրի համաձայն 2017 թվականին ակտիվացվեց խորհրդատվական մեխանիզմը տարածաշրջանային վարչակազմերի բազաներին, որտեղ էլ մասնակցում են ինչպես տեղական ինքնակառավարման, այնպես էլ համապատասխան տարածաշրջանային վարչակազմի շրջաններում ապրող էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Կարևոր խորհրդատվական մեխանիզմն է նաև Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում գոյություն ունեցող էթնիկական փոքրամասնությունների քաղաքացիական ներգրավվածության ուղենիշ կառուցվածքը «Ընկերության տունը», որն էլ Բաթումի քաղաքապետարանի կողմից էր հիմնադրվել 2006 թվականին և միացնում է Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում գրանցված բոլոր էթնիկական միասնությունը: Հանրային պաշտպանի գրասենյակի մոտ գոյություն ունեցող

Էթնիկական փոքրամասնությունների խորհրդից ի տարբերություն Բաթումի Ընկերության տան տեղական բյուջեից է ֆինանսավորվում, գործունեության հիմնական մասը ուղղված է Աջարիայի էթնիկական բազմազանության ներկայացմանը և մշակութային ինքնության պաշտպանմանը: Ինչպես Թբիլիսիում, այնպես էլ շրջաններում գոյություն ունեցող էթնիկական փոքրամասնությունների խորհրդատվության և ներգրավվածության վրա կողմնորոշված կառույցների կարևորությունը նաև արտահայտվում է նրանց մասնակցության մեջ տարբեր միջազգային մեխանիզմների համար Վրաստանում գոյություն ունեցող փոքրամասնությունների կարգավիճակի մասին այլընտրանքային հաշվետվությունները պատրաստելիս, նման հաշվետվությունները արդեն պատրաստած էր ունիվերսալ պարբերական վերանայման համար և ռասայական խտրականության վերացման կոմիտեի համար (CERD), նմանատիպ հաշվետվությունը նաև պատրաստվում է Վրաստանի կողմից փոքրամասնությունների պաշտպանման շրջանակը կոնվենցիայի կատարման համար:

Քաղաքական գործընթացներում մասնակցության չափման համար, կարևոր էր իմանալ այն, թե որքանով են եղել **պատասխանողները ներգրավված ընտրական քարոզարշավներում կամ ուղղակի ընտրական գործընթացներում:**

Հարցաքննումը ցույց է տալիս, որ պատասխանողների 91.2%-ը ոչ մի անգամ չի մասնակցել ընտրական քարոզարշավների պլանավորման մեջ, իսկ այն պատասխանողների թիվը, ովքեր էլ մասնակցել են միայն 5.9%-ն է: Էքզիթ-փուլերի իրականացմանը մասնակցել էր միայն 3.7%-ը, իսկ 91.8%-ը չէր մասնակցել: Ինչ վերաբերվում է ընտրական հանձնաժողովի անդամությանը/նախագահությանը, նրա մեջ ներգրավված էր պատասխանողների 7.6%-ը, իսկ 89.5%-ը ներգրավված չէր: Քաղաքական կուսակցական քարոզչությանը ներգրավված էր համեմատած շատ պատասխանողներ 8,6%, իսկ 87.7%-ը ներգրավված չէր: Ինչ վերաբերվում է ընտրական բուկլետների կամ տեղեկատվական բրոշյուրների տարածման մեջ մասնակցելը, նրա մեջ, նաև ներգրավված էր պատասխանողների 8.6%-ը, իսկ 87.8%-ը չէր մասնակցել: Եվ վերջում էլ ընտրական ցուցակների ճշտգրմանը պատասխանողներից միայն 6.8%-ն էր մասնակցել, իսկ 88.7%-ը չէր մասնակցել (Տես դիագրամ N51):


Դիագրամ N51:



Ընտրական համակարգի և կուսակցության մասին տեղեկատվայնության որակը իմանալու համար կարևոր էր իմանալ այն, **թե որտեղից են ստանում պատասխանողները տեղեկություն կուսակցությունների և ընտրական թեկնածուների մասին**: Հարցաքննվածները տեղեկություն ստանալու մի քանի աղբյուր անվանեցին. 32.9%-ը տրված տեղեկությունը հեռուստատեսությունից է ստանում, 22.5%-ը հարևաններից/ընկերներից կամ աշխատակիցներից, 9.8%-ը ընտանիքի անդամներից, պատասխանողների 8.7%-ը պատասխանողներից. հարկ է նշել, որ պատասխանողների միայն 12.4%-ն է կուսակցությունների և ընտրական թեկնածուների մասին տեղեկություն ստանում օգտվելով ինտերնետի կողմից տրամադրված նյութերից: Իսկ 2.6%-ը այնպիսին են, ովքեր նշված տեղեկությունը ընդանրապես չեն ստանում: Գենդերային համատեքստի մեջ նման թրենդը հատվում է ընտրական համակարգների և կուսակցությունների մասին տեղեկություն ստանալու աղբյուրները օգտագործելու մասին: Այսինքն, տեղեկություն ստանալու աղբյուրները պատասխանողների գենդերային համատեքստի մեջ միմյանցից չեն տարբերվում: Հարկ է նշել, որ հեռուստատեսությունից տեղեկատվություն 35 տարեկան և նրանից բարձր տարիքի պատասխանողներն ավելի են ստանում, քան 35 տարեկանից ցածր տարիքի հարցաքննվածները: Այսպիսով, 18-34 տարեկան երիտասարդները, ուրիշ տարիքային խմբերի հետ համեմատած, ինտերնետն ավելի ակտիվ են օգտագործում ընտրությունների մասին տեղեկատվություն ստանալու համար (Տես դիագրամ N52):

Դիագրամ N52:

Որտեղի՞ց էք ստանում տեղեկատվություն կուսակցությունների և թեկնածուների մասին (N=1314)




5.5 Քաղաքական կուսակցությունների դերը

Քաղաքական գործընթացների մեջ էթնիկական փոքրամասնությունների մասնակցության գնահատման ժամանակ կարևոր դերը քաղաքական կուսակցություններին են տրվում, քանի որ հենց նրանցից են ձևավորվում գործադիր կամ օրենսդիր կառավարությունը, ընդդիմությունը և այլն: Համապատասխանորեն, կարևոր էր չափել այն, թե որքանով են վստահում պատասխանողները քաղաքական կուսակցություններին: Հետազոտության ընթացքում հատկացվել է 10 քաղաքական կուսակցություն, որոնք էլ ֆոկլուս-խմբերի ժամանակ հենց իրենք էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները հայտնաբերեցին: Հետազոտությունը ցույց տվեց, որ ընդհանուր առմամբ, քաղաքական կուսակցությունների նկատմամբ վստահությունը ցածր է: Պատասխանողների միայն 12.6%-ն է վստահում («Հիմնականում վստահում եմ» կամ «Ամբողջությամբ եմ վստահում») օրինակ

Վստահությունը քաղաքական կուսակցությունների նկատմամբ պատասխանողները 5 բալանոց սանդղակով գնահատեցին, որտեղ 1 բալը նշանակում էր , որ «Ընդհանրապես չեմ վստահում», 3 բալը «Ոչ վստահում եմ, ոչ էլ չեմ վստահում», 5 բալը «Ամբողջությամբ վստահում եմ»: «Քարթուլի օցնեբի» հանդեպ վստահությունը միջին բալով 2.62-ով ֆիքսվեց (Ստանդարտ թեքում՝ 1.48, իսկ մեդիանա՝ 3): Էթնիկական նշանով այս ցուցանիշը հետևյալ տեսակի է. Հայկական համայնքի պատասխանողների

միջին բալն է 2.85-ը, ադրբեջանականինը՝ 2.84-ը, քիստերինը՝ 2.99-ը, օսերինը՝ 2.83-ը, ուրբան փոքր էթնոտաներինը՝ 2.1-ը: «Միասնական ազգային շարժման» նկատմամբ վստահության ընդհանուր միջին բալն է 2.41-ը (Ստանդարտ թեքումը՝ 1.37, իսկ մեդիանա՝ 2): Էթնիկական նշանով միջին բալերը հետևյալ ձևով բաժանվեցին. Հայկական համայքը՝ 3.17, ադրբեջանական համայքը՝ 2.94, քիստերը՝ 1.68, օսերը՝ 2.21, ուրբան փոքր էթնոտաները՝ 2.28: Ինչ վերաբերվում է «Եվրոպական Վրաստանին», նրա նկատմամբ ընդհանուր վստահությունը միջին 2.04 բալով գնահատվեց (Ստանդարտ թեքումը՝ 1.20, իսկ մեդիանա՝ 1): «Վրաստանի հայրենասիրական դաշինքի» նկատմամբ վստահության ընդհանուր միջին ցուցանիշը 1.83 բալ է (Ստանդարտ թեքումը՝ 1.10, իսկ մեդիանա՝ 1): «Վրաստանի լեյբորիստական կուսակցության» նկատմամբ վստահությանը միջին 2.03 բալ շնորհվեց (Ստանդարտ թեքումը՝ 1.35, իսկ մեդիանա՝ 1): Էլ ավելի ցածր է «Ժողովրդավարական շարժում՝ Միացյալ Վրաստանի (Նինո Բուրջանաձե)» նկատմամբ վստահության միջին բալը՝ 1.61 (Ստանդարտ թեքումը՝ 1.10, իսկ մեդիանա՝ 1): Կուսակցություն «Ազատ Վրաստան»-ի նկատմամբ վստահությունը միջին 1.61 բալով գնահատվեց (Ստանդարտ թեքումը՝ 0.96, իսկ մեդիանա՝ 1): Մոտավորապես նույն է «Հանրապետական կուսակցության» նկատմամբ վստահությունը, նրա միջին ցուցանիշն է 1.60 (Ստանդարտ թեքումը՝ 0.97, իսկ մեդիանա՝ 1): «Գիորգի Վաշաձե - Նոր Վրաստանի» նկատմամբ վստահության միջին բալն է 2.05 (Ստանդարտ թեքումը՝ 1.32, իսկ մեդիանա՝ 1): Քաղաքական կուսակցություն «Գիրչի»-ի նկատմամբ վստահության միջին բալն է 1.87 (Ստանդարտ թեքումը՝ 1.22, իսկ մեդիանա՝ 1) (Տես դիագրամ N53):

**Դիագրամ N53:**




Քաղաքական կուսակցությունների նկատմամբ վստահությունը զգալիորեն ցածր է 18-34 տարեկան պատասխանողների մեջ, ուրիշ տարիքային խմբերի հետ համեմատած: «Քարթուլի օցներա՝ ժողովրդավարական Վրաստանի» նկատմամբ վստահության միջին բալը 18-24 տարեկան



պատասխանողների մեջ 2.46 և 25-34 տարեկան հարցաքննվածների մեջ՝ 2.25, այն ժամանակ, երբ որ 35-44 տարեկան հետազոտության մասնակիցները միջին 2.81 բալով են վստահում, 45-54 տարեկանները՝ 2.79-ով, 55-64 տարեկանները՝ 2.65-ով, 65 տարեկան և բարձր՝ 2.70 բալով: Տարիքային խմբերի մեջ նման տենդեցիան «Միասնական ազգային շարժման» նկատմամբ վստահության տեսանկյունից էլ է հատվում: Նրա հանդեպ բոլորից անվստահությամբ են տրամադրված 18-34 տարեկան պատասխանողները, իսկ բոլորից շատ այս կուսակցությանը 65 տարեկան և բարձր տարիք ունեցող պատասխանողներն են վստահում (Թեև, վստահության միջին ցուցանիշը մեկ է բացասական դաշտում է տեղադրվում՝ 2.71): 65 տարեկան և բարձր տարիք ունեցող պատասխանողների մեջ, ուրիշ տարիքային խմբերի հետ համեմատած, ավելի բարձր է վստահությունը, նաև, «Եվրոպական Վրաստանի» նկատմամբ (Վստահության միջին բալն է 2.47, այն ժամանակ, երբ 18-24 տարեկան պատասխանողների մեջ այս ցուցանիշը 1.75 բալ է և 25-34 տարեկանների մեջ՝ 1.71) (Տես դիագրամ N54):

**Դիագրամ N54:**




Կոնկրետ կուսակցությունների նկատմամբ վստահության մեջ էլ **հետաքրքիր դեր է կատարում վրացերենի իմացությունը**. Հատվում են, որ կուսակցությունների նկատմամբ վստահության և լեզվի իմացության մակարդակի փոփոխականությունը վիճակագրական կապի մեջ են միմյանց հետ: Վրացերեն լեզվի իմացության ինդեքսի միջին ցուցանիշը ավելի բարձր է այն պատասխանողների մեջ, որոնք էլ վստահում են քաղաքական կուսակցությանը՝ «Բարթուլի օցնեբա՝ ժողովրդավարական

Վրաստանի»-ին (Ավելի վստահում եմ, քան չեմ վստահում՝ միջին է՝ 15.87 և վստահում եմ 18.47), քան նրանց ով վստահում է քաղաքական կուսակցության «Միասնական ազգային շարժում» (Ավելի վստահում եմ, քան չեմ վստահում՝ միջին է 14.72-ը և վստահում եմ՝ միջին է՝ 13.85):

Կուսակցությունների ընդհանուր գնահատումներից հետո, կարևոր էր իմանալ այն, թե պատասխանողների կարծիքով, **որքանով են ակտիվ կուսակցությունները էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների հետաքրքրվածության ու իրենց շարքերը ներգրավվելու համար:** Պատասխանողների 41.5%-ը մտածում է, որ կուսակցությունները պասիվ են («Շատ են պասիվ» կամ «Ավելի պասիվ են, քան ակտիվ»), 18.3%-ի կարծիքով էլ, նրանք հավասար են պասիվ և ակտիվ: Պատասխանողների միայն 16.4%-ն է համարում, որ էթնիկական փոքրամասնություններին իրենց շարքերը ներգրավվելու տեսանկյունից, քաղաքական կուսակցությունները ակտիվ են («Շատ են ակտիվ» կամ «Ավելի ակտիվ են, քան պասիվ»): Հարցաքննվածների 23.8%-ը դժվարացավ այս հարցին պատասխանել (Տես դիագրամ N55): Էթնիկական փոքրամասնությունների խմբերի միջև նշված հարցերի նկատմամբ վերաբերմունքը մի փոքր տարբեր է. Հայ (25.9%) և քիստ (19.5%) պատասխանողներից համեմատած մեծ մասը համարում է, որ կուսակցությունների մեջ ակտիվ են («Շատ են ակտիվ» կամ «Ավելի ակտիվ են, քան պասիվ») այս առումով, քան ուրիշ էթնիկական խմբերի ներկայացուցիչները:


**Դիագրամ N55:**



Վերոնշյալ հարցերից ելնելով, հետաքրքիր էր իմանալը այն, թե **կոնկրետ որ կուսակցություններն են աշխատում, ավել կամ պակաս որակով, էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների հետաքրքրվածության ու իրենց շարքերը ներգրավվելու համար:** Պատասխանողները տրված հարցին այսպես պատասխանեցին. 22.4%-ի կարծիքով, «Քարթուլի օցնեբա՝ ժողովրդավարական Վրաստանը» աշխատում է էթնիկական փոքրամասնությունների հետաքրքրվածության և իրենց շարքերը ներգրավվելու համար, 19.3%-ի կարծիքով՝ «Միասնական ազգային շարժումը» աշխատում է

Էթնիկական փոքրամասնություններին իրենց շարքերը ներգրավվելու համար, 6.3%-ի կարծիքով՝ «Եվրոպական Վրաստանը», իսկ 23.7%-ի կարծիքով էլ ոչ մի կուսակցություն չի աշխատում նման հարցերի շուրջ: Էթնիկական համատեքստի մեջ ըստ պատասխանողների, պարզվեց, որ այս կուսակցությունները ավելի շատ են աշխատում հայերի, քիստերի և հետո ադրբեջանական խմբերի հետ (Տես դիագրամ N56):

**Դիագրամ N56:**




Հարցին, թե որքանով են ծանոթանում պատասխանողները քաղաքական կուսակցությունների ընտրական ծրագրերին, նրանց մեծ մասը, 55.7%-ը հայտնում է, որ ծանոթ չեն («Չեմ ծանոթանում» կամ «Ավելի չեմ ծանոթանում, քան ծանոթանում եմ»): Նրանց ասելով միայն 22.2%-ն է հետաքրքրված («Ավելի ծանոթանում եմ, քան չեմ ծանոթանում» կամ «Ծանոթ եմ»): Իսկ պատասխանողների 20.2%-ը մակերեսորեն է ծանոթանում կուսակցությունների ընտրական ծրագրերին: Հետաքրքիր է նշված հարցերը էթնիկական փոքրամասնությունների համատեքստի մեջ. քաղաքական կուսակցությունների ընտրական ծրագրերին ծանոթանում է («Ավելի ծանոթանում եմ, քան չեմ ծանոթանում» կամ «Ծանոթանում եմ») հայկական համայնքի պատասխանողների 14%-ը, ադրբեջանցիների՝ 1.1%-ը, քիստերի՝ 4.9%-ը, օսերի՝ 1.2%-ը, ուրբան փոքր էթնոսների ներկայացուցիչների՝ 4.3%-ը: Գենդերային համատեքստի մեջ կանանց և տղամարդկանց վարքագիծը, այս տեսանկյունից, նման են:

Քաղաքական կուսակցությունների հետ համագործակցության պատրաստակամությունից բացի, կարևոր էր, նաև, իմանալ այն մասին, թե ինչ ուղղությամբ են համագործակցում կուսակցությունները էթնիկական փոքրամասնությունների խմբերի ներկայացուցիչների հետ: Պատասխանողների 31.5%-ը ասում է, որ չգիտի նման համագործակցության գոյության մասին, 37.4%-ի ասելով, կուսակցությունները նրանց հետ ոչ մի ուղղությամբ չեն համագործակցում: Պատասխանողները համագործակցությունը միայն երկու ձևով նշեցին. 7.8%-ի ասելով քաղաքական կուսակցությունները բնակիչների հետ համագործակցում են կուսակցության մեջ քաղաքացիների գրանցման տեսանկյունով, 15.5%-ի ասելով էլ, կուսակցությունների համագործակցությունը քաղաքացիների հետ՝ կուսակցական առաջադրանքները կատարելով են արտահայտվում:

Եվ վերջում, հարցերի այս բլոկն ավարտվեց թեմայով, թե ինչքանով են ներառված **կուսակցական ծրագրերը և նրանց իրական գործունեությունները այն անհրաժեշտություններով և հարցերով, որոնք էլ էթնիկական փոքրամասնությունների խմբերի հետ են կապված:** Պատասխանողների 36.9%-ը չունի պատասխան այս հարցին: 46.4%-ի ասելով, կուսակցությունների ծրագրերը և գործունեությունները չեն ներառում («Չեն ներառում» կամ «Ավելի չեն ներառում, քան ներառում են») նրանց անհրաժեշտությունները: Միայն պատասխանողների 16.1%-ն է համարում, որ նշված ծրագրերը նման հարցերն են ներառում («Ներառում են» կամ «Ավելի ներառում են, քան չեն ներառում») (Տես դիագրամ N57):

կուսակցությունների ծրագրերը և իրենց իրական գործունեությունները որքանով են ներառում այն անհրաժեշտություններն ու խնդիրները, որոնք կոնկրետ ձեր էթնիկական խմբի հետ են կապված (n=1314)

**Դիագրամ N57:**




**Նշումներ.** Կատեգորիաներում «Ներառում են» միացված են հետևյալ երկու պատասխաններին. «Ամբողջությամբ ներառում են» և «Ավելի ներառում են, քան չեն ներառում», իսկ կատեգորիաներում «Չեն ներառում», «Ընդհանրապես չեն ներառում» և «Ավելի չեն ներառում, քան ներառում են»:

## 5.6 Մասնակցություն տեղական ինքնակառավարման մեջ

Քաղաքական կուսակցություններից բացի, ժողովրդավարացման գործընթացի մեջ կարևոր բաղադրիչն է նաև, տեղական ինքնակառավարությունը, քանի որ նրա գոյությունը և ուժը տեղական ժողովրդավարության հիմնարար սկզբունքն է: Նա ի նկատի ունի, այն որ քաղաքացու իրավունքն ու պատասխանատվությունն է մասնակցել այն հարցերի լուծմանը, ինչ անմիջականորեն վերաբերվում է իրեն և իր բնակության վայրին: Համապատասխանորեն, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը քաղաքական մասնակցության մեջ կարևոր դերերից մեկն է խաղում: Ընդհանուր առմամբ, ըստ հետազոտությանը, տեղական ինքնակառավարմանը էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների 32.1%-ը վստահում է («Ամբողջությամբ վստահում եմ» կամ «Հիմնականում վստահում եմ»):


Ի սկզբանե, պատասխանողները հարցին պատասխանեցին. **դիմում ենք թե՛ ոչ տեղական ինքնակառավարմանը, անձնական կամ ընտանեկան անհրաժեշտություններից ելնելով:** Պատասխանողների 69.9%-ը հայտնում է, որ չի դիմել նման մտադրությամբ, միայն 14.4%-ը այնպիսիներն են, ովքեր էլ դիմել են տեղական ինքնակառավարմանը ինչ որ խնդիրների պատճառով: Ինչ վերաբերվում է տեղական ինքնակառավարմանը **հանրային** անհրաժեշտությունների համար դիմելուն, նման պրակտիկային էլ ավելի քիչ պատասխանող է հետևում. 76.5%-ը չի դիմել այդ նպատակով տեղական ինքնակառավարմանը, միայն 9.9%-ն է դիմել, ամենաքիչը, մեկ որևէ խնդրի շուրջ (Տես դիագրամ N58):

**Դիագրամ N58:**



Տեղական ինքնակառավարմանը դիմելու և վրացերենի իմացությանը փոփոխականության միջև հայտնաբերվում է վիճակագրական վստահելի կապ: Հետազոտությունը ցույց է տալիս, թե որ պատասխանողներն էլ չեն դիմել մարմիններին ոչ անձնական և ոչ էլ հանրային անհրաժեշտությունների համար, դրանց վրացերենի իմացության ինդեքսի միջին ցուցանիշը ավելի ցածր է (Չեն դիմել անձնական անհրաժեշտությունների համար՝ միջին 15.56 է և չեն դիմել հանրային անհրաժեշտությունների համար՝ միջինը՝ 15.85), քան նրանցը, որվքեր առնվազն գոնե մեկ անգամ դիմել են ցանկացած անհրաժեշտությունների համար (Օրինակ, ով էլ դիմել է մեկ անձնական խնդրի համար՝ միջինը՝ 18.42 և դիմել է մի քանի հանրային խնդիրների համար՝ միջինը 20.27) (Տես դիագրամ N59):


Դիագրամ N59:



Ինքնակառավարման գործունեության մեջ ներգրավվման մասին իմանալու համար, պետք է հաստատ էինք, նաև թե որքանով էին պատասխանողները տեղեկացված նրա մասին, որ նրանք կարող են մասնակցել տեղական ինքնակառավարման կողմից կազմակերպված միջոցառումների մեջ: Պատասխանողների 84.2%-ը ասում է, որ տեղեկացված չէ այն մասին, որ կարող է բյուջեի պլանավորմանը մասնակցել: Նրանցից միայն 8.7%-ն է ասում, որ տեղեկացված է, թեև չգիտի կոնկրետ ինչպես ներգրավվել նրա մեջ: Ինչ վերաբերվում է տեղեկացվածության որակին, այն մասին, որ նրանք կարող են մասնակցել քաղաքապետարանի զարգացման ստրատեգիայի մշակմանը, պատասխանողներից մեծամասնությունը (84.9%) ասում է, որ տեղեկացված չէ այդ մասին: Այդ մասին տեղեկացված է 7.8%-ը, թեև չգիտի կոնկրետ ինչպես մասնակցել այդ գործունեությունների մեջ: Քաղաքում/մունիցիպալիտետում վարման տարբեր գործունեությանը պլանավորման մեջ մասնակցելու հնարավորությունների մասին տեղեկացված է պատասխանողների 8.7%-ը և տեղեկացված չեն՝ 84.1%-ը: Զգալիորեն ցածր է, նաև քաղաքի/գյուղի առաջնահերթությունների սահմանման մեջ մասնակցելու

հնարավորության մասին տեղեկության մակարդակը. Տեղեկացված է 8%-ը և տեղեկացված չէ՝ 84%-ը (Տես դիագրամ N60):


**Դիագրամ N60:**



Վերոնշյալ հարցերի շուրջ պատասխանողների տեղեկացվածությունը վիճակագրական վստահելի կապի մեջ է վրացերենի տիրապետման փոփոխականության հետ: Հատվում է այն, որ տեղեկացվածության մակարդակի աճման հետ միասին աճում է վրացերենի իմացության ինդեքսի միջին ցուցանիշը: Օրինակ, վրացերենի տիրապետման միջին բալը՝ 21.61 է այն պատասխանողների մեջ, որոնք էլ ամբողջությամբ տեղեկացված են այն մասին, որ քաղաքի/գյուղի առաջնահերթությունների սահմանման մեջ կարող են մասնակցել, իսկ ովքեր այս հարցերի մասին տեղեկացված չեն, նրանց համար վրացերենի իմացության ինդեքսի միջին ցուցանիշն է 16.24 (Տես դիագրամ N61):




**Դիագրամ N61:**



Հետաքրքիր է այն, թե **տեղական ինքնակառավարման կողմից կազմակերպված, որ միջոցառում(ներ)ի մեջ են մասնակցել պատասխանողները**: Հետազոտության մասնակիցների 83.6%-ից ոչ մեկը նման տեսակի միջոցառումների մեջ չի մասնակցել: Պատասխանողներից՝ 7.2%-ը չի հիշում, չնայած նրանց թիվը շատ քիչ է, ովքեր էլ բյուջեի պլանավորման մեջ (0.7%), մունիցիպալիտետի զարգացման ստրատեգիայի մշակման մեջ (1.3%), քաղաքում/մունիցիպալիտետում վարման տարբեր գործունեությունների պլանավորման մեջ (2.4%) կամ քաղաքի/գյուղի առաջնահերթությունների սահմանման մեջ (3.6%) է մասնակցել (Տես դիագրամ N62):


**Դիագրամ N62:**



Տեղական ինքնակառավարման հետ համագործակցելու աճին անձնական սոցիալական կապերը կամ էլ, թեև, այնտեղ աշխատողների ինքնության իմացությունը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարության մեջ աշխատող անձանց չեն ճանաչում պատասխանողներից 39.9%-ը, 1-2 մարդ է ճանաչում 19.7%-ը, մի քանիսին՝ 20.8%-ը, իսկ մեծամասնության է ճանաչում՝ 14.6%-ը (Տես դիագրամ N63):

**Դիագրամ N63:**

**Ճանաչում էք, թե ոչ տեղական ինքնավարությունում աշխատող անձանց (N=1314)**



Լոգիստիկ ռեգրեսիայի մոդելի համաձայն, վիճակագրականորեն կարևոր կապ է բացահայտվում տեղական ինքնակառավարության մեջ աշխատող մարդկանց ճանաչման և պատասխանողների գենդերի և կրթության մակարդակի միջև: Հարկ է նշել այն, որ կանանց կոեֆիցիենտը բացասական է, ինչ ցույց է տալիս այն, որ համեմատած տղամարդկանց հետ, կանանց կողմից տեղական ինքնակառավարության մեջ աշխատող անձանց ճանաչման հնարավորությունները տարբեր են: Նաև, կանանց հնարավորությունները տղամարդկանցը համեմատած քիչ է (Հնարավորության կոեֆիցիենտը՝ 0.96 է, Signif. code=0.01): Այսինքն, նրա հնարավորությունը, որ կանայք ճանաչեն այս մարմինների մեջ աշխատող անձանց, ինչ վերաբերում է տղամարդկանց, ավելի ցածր է և բացասական: Իսկ, կրթության փոփոխականության կոեֆիցիենտը դրական է, ինչ նշանակում է այն, որ կրթության մակարդակի աճման հետ միասին աճում է նաև տեղական ինքնակառավարության կադրների ճանաչման հնարավորությունները (Signif. code=0):


Կարևոր էր նաև իմանալ այն, թե ինչպես են հաշվում իրենք պատասխանողները, **որքանո՞վ են կարևոր իրենց ներկայացուցիչների տեղական ինքնակառավարության մեջ լինելը:** Պատասխանողների 65.2%-ի համար տրված հարցը կարևոր է («Հիմնականում կարևոր է» կամ «Շատ կարևոր է»), 18.1%-ի համար էլ մասամբ կարևոր է, մասամբ՝ ոչ, իսկ 8.1%-ի համար կարևոր չէ («Ընդհանրապես կարևոր չէ» կամ «Հիմնականում, կարևոր չէ»):

## 5.7 Քաղաքացիական կազմակերպությունների դերը

Երկրում ընթացիկ քաղաքական գործընթացի կարևոր օղակից մեկն է ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք էլ մեղիանայի հետ միասին, կարևոր դեր պետք է խաղային էթնիկական փոքրամասնությունների քաղաքական ակտիվացման և մասնակցության աճման տեսանկյունով: Համապատասխանորեն, պատասխանողներին հարցրեցինք, իրենց տեղեկատվությամբ, **հիմնականում, որ հարցերի շուրջ են աշխատում տեղական ոչ կառավարական կազմակերպությունները իրենց շրջաններում/քաղաքում:** Պատասխանողներից մեծամասնությունը (37.1%) չգիտի տեղական ոչ կառավարական կառավարությունների աշխատանքի թեմատիկան (Կամ ընդհանուր առմամբ, նրանց գոյությունը իրենց շրջաններում): Հետազոտության մասնակիցների 12.4%-ի ասելով ոչ կառավարական կազմակերպություններում կանանց իրավունքների համար են աշխատում, 10.8%-ը ասում է, որ ոչ կառավարական սեկտորը իրազեկության բարձրացման առումով տարբեր ակտուալ հարցի շուրջ է աշխատում, 8.2%-ի կարծիքով, տեղական ենթակառուցվածքային խնդիրների լուծման վերաբերյալ, իսկ 7.5%-ի ասելով ընտրական գործընթացի մոնիտորինգի առումով (Տես դիագրամ N64): Հետաքրքիր է էթնիկական համատեքստի մեջ այն պատասխանողների մասը, որոնք էլ չգիտեն, թե ինչ հարցերի շուրջ են աշխատում տեղական ոչ կառավարական կազմակերպությունները: Հետազոտության հայկական համայնքի մասնակիցների մեջ այսպիսի պատասխանողների մասն է կազմում 38.2%-ը, ադրբեջանականի մեջ՝ 45.5%-ը, քիստերի մեջ՝ 8.1%-ը, օսերի մեջ՝ 38.6%-ը և ուրբան փոքր էթնոսների ներկայացուցիչների՝ 50.2%-ը:

**Դիագրամ N64:**

**Ո՞ր խնդիրների վրա են աշխատում տեղական հասարակական կազմակերպությունները ձեր տարածաշրջանում/քաղաքում (N=1314)**




Տրված տեղեկությունից բացի, նաև, կարևոր էր իմանալ այն մասին, թե պատասխանողների կարծիքով, նրանց էթնիկական խմբի **դեպքում, որ հարցերի շուրջը պետք է աշխատանք լինի առաջնահերթական նրանց համայնքում/քաղաքում աշխատող ոչ կառավարական կազմակերպությունների համար:** Պատասխանողների 17.4%-ը այս հարցին չունի պատասխան: Սակայն, կարևոր մասը (19.4%) համարում է, որ այս կազմակերպությունների առաջնահերթական ուղղությունը տեղական ենթակառուցվածքային խնդիրների լուծումը պետք է լինի, 12.5%-ի կարծիքով, ոչ կառավարական կազմակերպությունները իրազեկության բարձրացման առումով պետք է աշխատեն, 9.5%-ի կարծիքով, այս պետք է լինի էթնիկական փոքրամասնությունների քաղաքական մասնակցության աճման համար աշխատանքը, 8.9%-ը համարում է, որ նրանց աշխատանքը երիտասարդական քաղաքականության

ուղղությամբ պետք է սկսեն, 8.3%-ի կարծիքով՝ ոչ կառավարական կազմակերպությունները իրենց պետք է օգնեն իրավաբանական ծառայություններով, իսկ 8%-ը համարում է, որ առաջնահերթական նաև, պետք է լինի վրացերեն լեզվի սովորելը:

Տեղական ենթակառուցվածքային խնդիրների լուծման համար ոչ կառավարական կազմակերպությունները աշխատել կցանկանային օսական համայնքի պատասխանողների 40.6%-ը, կանանց իրավունքների և վրացերենի լեզուն սովորելու համար ադրբեջանցի պատասխանողների մոտավորապես 14%-ը, հայ պատասխանողների՝ 13.7%-ը կցանկանար նաև վրացերեն լեզվով իրենք աշխատելին, քիստ պատասխանողների՝ 15.6%-ը իրազեկության բարձրացնելը և 15.5%-ը՝ քաղաքական մասնակցության աճը: Իսկ ուրբան փոքր էթնոսների մեջ այս առումով ավելի շատ ակտուալ ցանկալի հարցեր չեն հատվում (Տես դիագրամ N65):

**Դիագրամ N65:**



## 6. Եզրակացություն

Պետական դոմինանտ ինստիտուցիան, որն էլ էթնիկական փոքրամասնությունների հանդեպ քաղաքականության օրակարգն է և ընդհանուր առմամբ քաղաքականության բովանդակություն է կազմում: Ժողովրդավարության սկզբունքներն էլ փոքրամասնությունների քաղաքական կյանքում ներգրավվելու և այդ խմբերին հավասար հնարավորությունների գոյությունն է որոշում: Տարբեր խմբերի գոյությունը ժամանակակից հասարակության մեջ անխուսափելի գործընթաց է և ժողովրդավարական պետությունների մարտահրավերները այնպես են բացահայտվում, որ այս խմբերի քաղաքական կյանքում մասնակցության հավասար հնարավորությունները ապահովված լինեն: Վրաստանն էլ, ինչպես նաև շատ պետություններ, տարբեր խմբերի բազմերանգությամբ է առանձնանում, որոնցից արտահայտված են էթնիկական փոքրամասնությունների խմբերը: 2014 թվականին բնակչության նկարագրության արդյունքով, Վրաստանի բնակչության ընդհանուր քանակի մոտավոր 13.2%-ը վերաբերվում է էթնիկական փոքրամասնություններին: Կարևոր է պետության կողմից այնպիսի քաղաքական միջավայր ստեղծել, որը էթնիկական փոքրամասնությունների խմբերի քաղաքական մասնակցությանը և սոցիալական նպաստների մատչելիությանը կօգնի: Նշված հետազոտությունը պարունակեց հենց այս խմբերի՝ հայկական, ադրբեջանական, քիստերի, օսերի և ուրբան փոքր էթնոսների՝ ռուսների, քրդերի/եզդիների և գնչուների քաղաքական կյանքում ձեռ բերեց ներգրավվածության ուսուցումը:

Մի կողմից, հետաքրքիր է, հենց ինքը պետության կողմից ձեռնարկված քայլերը, որոնք էլ կարող են ուղղված լինեն այս խմբերի քաղաքական մասնակցության բարձրացմանը և, ընդհանուր առմամբ, կարող է ուղղված լինել բարգավաճման կողմը: Մյուս կողմից, հենց այս խմբերի անդամների վարքագծերը, վերաբերմունքները և ընկալումները այս հարցի կապակցությամբ: Չնայած նրան, որ բացահայտվում են կայունության և արդյունավետության ինստիտուցիոնալ մակարդակների նկատմամբ դրական միտումները, էթնիկական փոքրամասնությունների պաշտպանման և քաղաքացիական ինտեգրման քաղաքականության կողմից հայտարարված առաջնահերթությունը բյուջետային մակարդակով ֆինանսական ապահովության մեջ արտացոլված չէ: Համապատասխանաբար, կառավարության պարտականությունների կատարումը հիմնականում պայմանավորված է միջազգային աջակցությամբ: Կենտրոնական կառավարության մակարդակով հարկ է նշել այն, որ էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների առավել համապատասխան և համաչափ ներկայացուցչությունը հանդիպում է 2016 թվականի հրավերի խորհրդարանում: Նրանք 11 անդամով են ներկայացել, որոնք կազմում են պատգամավորների ընդհանուր քանակի 7.3 տոկոսը: Ինչ վերաբերվում է տեղական մակարդակին, տեղականորեն հանդիպում է քաղաքացիական ակտիվության, սեփական խնդիրների, ներկայիս մարտահրավերների հնչելու և շահերի պաշտպանության հնարավորությունը, որն էլ իր հերթին, ինստիտուցիոնալորեն ապահովված է պետության կողմից, սակայն հիմնական խնդիրը մնում է էթնիկական փոքրամասնությունների կազմակերպությունների և համայնքային միությունների անկայունությունը և անբավարար պատրաստությունը, անկախ արտադրեն քաղաքացիական գործունեությունը: Հարկ է նշել այլ թերություններն էլ, որոնք էթնիկական փոքրամասնությունների հարցաքննության ընթացքում

հատվել են և որոնք էլ ավելի ընդարձակ համակարգային և ընդգծում է ինստիտուցիոնալ խնդիրներին: Հետազոտությունը իր մեջ ընդգրկեց էթնիկական փոքրամասնությունների քաղաքական մասնակցության ավանդական ձևերի ուսուցումը, մասնավորապես՝ մասնակցությունը ընտրություններում և նրա իրականացման մեջ, քաղաքական կուսակցությունների անդամությունը և իր հետ համագործակցությունը, մասնակցությունը տեղական ինքնավարության իրականացման մեջ, ոչ կառավարական կազմակերպությունների անդամությունը և նրանց հետ համագործակցությունը, մասնակցությունը պետիցիայում և կոլեկտիվ ստորագրությունների հավաքելու մեջ, պլանավորում/մասնակցություն բողոքական հանրահավաքին և այլն:

Կարևոր է էթնիկական փոքրամասնությունների խմբերի սոցիալական և տնտեսական իրավիճակի բացահայտումը, որն էլ հնարավոր է կապի մեջ լինի այս խմբերի ներկայացուցիչների քաղաքական ակտիվիզմի մակարդակների հետ: Հետազոտության համաձայն պարզվեց, որ Վրաստանի ընդհանուր բնակչության հետ համեմատ (Կովկասյան բարոմետր ըստ Վրաստանի 2017 թվականի արդյունքների), էթնիկական փոքրամասնությունների խմբերում՝ ավելի ցածր է կրթության մակարդակի ցուցանիշը; ավելի բարձր է գործազրկությունը և աղքատության մակարդակը: Հարկ է նշել, հետազոտության մասնակիցների վրաց լեզվի գիտության մակարդակն էլ, տարիքային աճի հետ միասին, նվազում է նրա գիտության մակարդակը: Վրաց լեզվի գիտության մակարդակը ամենա ցածրն էր աղբբեջանական համայնքում: Ինչ վերաբերվում է այս խմբերում առանձնացված սոցիալական-տնտեսական խնդիրներին, ամենասուր խնդիրն է գործազրկությունը և աղքատությունը: Սակայն, հետազոտությունը ցուցադրում է պետական լեզվի գիտության խնդրի ակտուալությունն էլ (Հատկապես աղբբեջանական համայնքում): Ինչ վերաբերվում է քաղաքական մասնակցության ձևերին, պատասխանողների մեծամասնությունը վերջին երկու տարիների ընթացքում քաղաքական ներգրավման հետևյալ մեթոդներից ոչ մեկը չի օգտագործել՝ դիմել տեղական ինքավարությանը, խնդիրների մասին հանրային խոսել լրատվամիջոցների օգնությամբ, հավաքել կոլեկտիվ ստորագրություններ, մասնակցել բողոքի հանրահավաքներին և այլն: Հետազոտության մասնակիցների միայն 8.5%-ն է խնդիրների մասին հանրային խոսել լրատվամիջոցների միջոցով, 8.4%-ը մասնակցել է կոլեկտիվ ստորագրություններ հավաքելուն, 5.7%-ը եղել է բողոքի հանրահավաքին, 3.2%-ը համագործակցել է ոչ կառավարական կազմակերպության հետ և այլն: Սակայն, մյուս կողմից, այս ցուցանիշները հնարավոր է բնութագրելի չլինի միայն էթնիկական փոքրամասնությունների համար, այլ, ամբողջ հանրային միտումներին է բացահայտում: Ընտրությունների առումով, հարկ է նշել, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իրականացված ծրագրային ակտիվությունները, որոնք էլ ուղղված են ընտրությունների մասին տեղեկացնելուն էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչներին և ընտրություններում նրանց դեպի ներգրավվածության բարձրացումը: Հետազոտության մեջ մասնակցող 74,5%-ի ասելով, նրանք մասնակցել էին 2016 թվականի խորհրարանական ընտրություններին և նրանցից 65,5%-ը արտահայտեց պատրաստականությունը, որ պատրաստվում էր ձայն տալ 2018 թվականի նախագահական ընտրություններում: Սակայն, հարկ է նշել այն էլ, որ պատասխանողների 91,2%-ը երբեք չի մասնակցել նախընտրական քարոզչության պլանավորմանը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ վրացական քաղաքական ոլորտում գոյություն չունեն էթնիկական փոքրամասնությունների շահերը արտահայտող քաղաքական կուսակցությունները և ոչ էլ քվոտաների պրակտիկան, որն էլ կիրախուսի այս խմբերի ներկայացուցիչների ներկայությունը կուսակցություններում:



Պատասխանողների 43.8%-ի ասելով, կուսակցությունների ծրագրերը և գործունեությունը չի ներառում իրենց անհրաժեշտությունները: Ինչպես նաև, պատասխանողների մոտավորապես 70%-ը կամ չի իմացել, կամ էլ մերժում է կուսակցությունների էթնիկական փոքրամասնությունների հետ համագործակցության մասին որևէ ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, հետազոտության համաձայն էթնիկական փոքրամասնությունների խմբերում քաղաքական կուսակցությունների հանդեպ վստահությունը ցածր է, պատասխանողների միայն 12,6%-ն է հայտարարում, որ վստահում է քաղաքական կուսակցություններին:

Հետաքրքիր միտումներ են հատվում, նաև, տեղական ինքնակառավարման գործունեության առումով: Այն ութ քաղաքապետարանում (Գարդաբանի, Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Ծալկա, Ախալցխե, Ախալքալաք, Նինոծմինդա), որոնք բնակեցված են էթնիկական փոքրամասնությունների մեծ մասով, միջին 779 էթնիկական վրացին սակրեբուլյում մեկ ներկայացուցիչ ունի, այն ժամանակ, երբ որ մարմնի մեջ 1,116 հայ և 2 945 ադրբեջանցի բնակչությունը ունի մեկական ներկայացուցիչ: Հարցազրույցը ցույց է տվել, որ 2 տարվա ընթացքում պատասխանողների միայն 14.4%-ն է դիմել տեղական կառավարությանը որևէ խնդիր լուծման համար: Պատասխանողների 70%-ը երբեք չի դիմել այս մարմնին անձնական/ընտանեկան, իսկ 76.5% -ը՝ հանրային անհրաժեշտություններից ելնելով: Հարցաքննվածների մեծամասնությունը (80%-ից ավելի)՝ ա) տեղեկացված չի տեղական ինքնավարության հետ համագործակցության ճանապարհների մասին, բ) չի մասնակցել այս մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին:

Էթնիկական փոքրամասնությունների քաղաքական մասնակցության ապահովման մեջ ոչ կառավարական կազմակերպությունների դերն էլ է կարևոր, սակայն, հետազոտությունը ցույց տվեց, որ միայն 24.3% է վստահում նրանց: Ըստ հետազոտության, պատասխանողների առնվազն կեսը (54.8%) չգիտի տեղական ոչ կառավարական կազմակերպությունների աշխատանքային թեմատիկան կամ, հենց իրենց գոյության մասին էլ չգիտեն իրենց տարածաշրջանում/բնակավայրում:

Հարկ է նշել նաև այն գործոնները, որոնք կապի մեջ են պատասխանողների քաղաքական մասնակցության որակի հետ: Հիմնական գործոններից մեկն է վրաց լեզվի իմացության մակարդակը, որը ըստ հետազոտության, կապի մեջ է ընդհանրապես երկրում ընթացիկ իրադարձությունների մասին տեղեկացվելու և կոնկրետ գործընթացների մեջ մասնակցելու հետ: Մասնավորապես, որքան բարձր է վրաց լեզվի իմացության մակարդակը, այնքան ավելի է շատանում պատասխանողների տեղեկատվությունը և քաղաքական գործընթացներին մասնակցությունը: Վրաստանում ընթացիկ իրադարձությունների մասին էթնիկական փոքրամասնություններին տեղեկատվության գլխավոր աղբյուրն է Վրաստանի հեռուստատեսությունը: Գենդերային նշանով հիմնականում նման միտումները տարածվում են պատասխանողների վերաբերմունքների մեջ, այնուամենայնիվ, գործողությունների մակարդակին դեռևս կան տարբերություններ: Օրինակ, ավելի բարձր է տղամարդկանց սոցիալական կապիտալը և հնարավորությունները, որ ներգրավված լինեն տեղական ինքնավարությունների իրականացման մեջ: Ինչ վերաբերվում է պատասխանողների տարիքային խմբերին, առանձնահատկությամբ բնութագրվում են 18-24 և 25-34 տարիքային կատեգորիաների ներկայացուցիչները: Մի շարք հարցերի հանդեպ ավելի քննադատական, տեղեկատվածներ և հետաքրքրվածներ են, քան այլ տարիքային խմբի ներկայացուցիչները: Համապատասխանաբար, պետության կողմից քաղաքականությունը սահմանելու ժամանակ կարևոր է այս խմբերին բնութագրող

հատկանիշների խորը ուսուցումը և քաղաքականության մեջ նրանց ներգրավվումը: Էթնիկական խմբերի ներսում էլ տարբեր միտումներ են բացահայտվում: Օրինակ, ադրբեջանական համայնքում հատկապես բացահայտվում է վրաց լեզվի չիմացության խնդիրը, ինչն էլ այդ խմբերի համար այլ դժվարություններ է առաջացնում: Այս խմբերին համեմատելու ժամանակ անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություններ անցկացնել, քանի որ հնարավոր է նրանց միջև տարբերությունները առաջացած լինեն մշակութային, կնոթական, պատմական կամ այլ կոնկրետ գործոններով:

Ի վերջո, էթնիկական փոքրամասնությունների մեջ բարձր է Վրաստանի և վրաց հասարակության հանդեպ մթակութային-քաղաքական ինքնության զգացումը: Սակայն, այս զգացումը որոշ չափով նվազում է երիտասարդ սերնդի մեջ և ամենացածրն է ադրբեջանական համայնքի մեջ: Էթնիկական փոքրամասնությունների խմբերը կիսվում են Վրաստանին, որպես հիբրիդային ժողովրդավարություն ունեցող պետության իմիջին: Ինչ վերաբերվում է քաղաքական ներգրավվմանը, հոչակագրի համաձայն, էթնիկական փոքրամասնությունների խմբերի մեծամասնությունը քաղաքական ինկլուզիայի կողմնակիցն է: Սակայն, նրանց մոտավորապես մեկ երրորդ մասը համաձայն է նրա հետ, որ քաղաքականությունը էլիտաների (Եվ ոչ «Սովորական» քաղաքացիներների) գործն է: Հոչակագրությունից դուրս, հարցաքննողների միայն մոտավորապես մեկ չորրորդ մասն է համարում իրեն քաղաքականորեն ակտիվ քաղաքացի: Ցածր ակտիվության պատճառներն են՝ քաղաքականության հանդեպ հետաքրքրություն չունենալը, ընտանեկան բեռը և վրաց լեզվի անկատարյալ իմացությունը:

## 7. Բիբլիոգրաֆիա

1. Arnstein, S. R. (1969). A ladder of citizen participation. *Journal of the American Institute of Planners*, 35 (4), 216–224.
2. Bennett, W. L., & Segerberg, A. (2013). *The logic of connective action: Digital media and the personalization of contentious politics*. Cambridge: Cambridge University Press.
3. Brady, H. E. (1998). “Political participation.” In J. P. Robinson, P. R. Shaver, & L. S. Wrightsman, (Eds.), *Measures of political attitudes* (pp. 737–801). San Diego, CA: Academic Press.
4. Conge, P. J. (1988). The concept of political participation: Toward a definition. *Comparative Politics*, 20(2), 241–249.
5. Encyclopedia Britannica - <https://www.britannica.com/topic/consociationalism>
6. Verba, S., & Nie, N. H. (1972). *Participation in America: Political democracy and social equality*. New York: Harper & Row.
7. Fox, S. (2013). Is it time to update the definition of political participation? Political participation in Britain: The decline and revival of civic culture. *Parliamentary Affairs*, 67(2), 495–505.
8. Kasfir, N. (1979). Explaining ethnic political participation. *World Politics*, 31(3), 365–388.
9. Kohli, A. (Ed.). (2014). *The State and Development in the Third World: A World Politics Reader* (Vol. 469). Princeton University Press.
10. Lijphart, A. (1969). Consociational democracy. *World politics*, 21(2), 207–225.
11. Nagel, J. (1986). The political construction of ethnicity. *Competitive ethnic relations*, 93–112.
12. Nagel, J. (1994). Constructing ethnicity: Creating and recreating ethnic identity and culture. *Social problems*, 41(1), 152–176.
13. Sandel, M (1982) *Liberalism and the Limits of Justice*, Cambridge/New York: Cambridge University Press.
14. Sandel, M (1996) *Democracy’s Discontent: America in search of a public philosophy*, Cambridge, MA: Belknap Press of Harvard University Press.
15. Sandel, M (2004) ‘Are we still a Commonwealth? Markets, morals, and civic life’, *Commonwealth Humanities Lecture 2004, Massachusetts Foundation for the Humanities*, last accessed 9 May 2007 from <http://www.mfh.org/specialprojects/chl/chl2004.html>.

16. Taylor, C (1992) *The Ethics of Authenticity* (originally published in Canada in 1991 as *The Malaise of Modernity*), Cambridge, MA, and London, UK: Harvard University Press.
17. Taylor, C (1994) 'The politics of recognition', in A Gutmann (ed), *Multiculturalism: Examining the politics of recognition*, Princeton, NJ: Princeton University Press, pp 25–73.
18. Taylor, C (1998) 'The dynamics of democratic exclusion', *Journal of Democracy* 9(4), pp 143–156.
19. Taylor, C (2001) 'Foreword', in A-G Gagnon and J Tully (eds), *Multinational Democracies*, Cambridge: Cambridge University Press, pp xiii-xv.
20. United Nations. (2005). Women and Elections: Guide to promoting the participation of women in elections. <http://www.un.org/womenwatch/osagi/wps/publication/WomenAndElections.pdf>
21. van Deth, J. W. (2001). "Studying political participation: Towards a theory of everything?". *Joint Sessions of Workshops of the European Consortium for Political Research* (Grenoble).
22. van Deth, J. W. (2014). A conceptual map of political participation. *Acta Politica*, 49(3), 349–367.
23. Young, I (1989) 'Polity and group difference: A critique of the ideal of universal citizenship', *Ethics* 99(2), pp 250–274.
24. Young, I (1990) *Justice and the Politics of Difference*, Princeton, NJ: Princeton University Press.
25. Young, I (1995) 'Together in difference: Transforming the logic of group political conflict', in W Kymlicka (ed), *The Rights of Minority Cultures*, New York: Oxford University Press, pp 155–176.
26. Young, I (2000) *Inclusion and Democracy*, Oxford: Oxford University Press.
27. ՄՄԿ-ի Կանանց կազմակերպություն (UN Women), Սոցիալական հետազոտության և վերլուծության ինստիտուտ: (2014). Էթնիկական փոքրամասնությունների կականց անհրաժեշտությունները և առաջնահերթությունները Քվեմո Քարթլի տարածաշրջաններում: [http://issa-georgia.com/files/Reports/UN%20women/%E1%83%A5%E1%83%90%E1%83%9A%E1%83%97%E1%83%90%20%E1%83%A1%E1%83%90%E1%83%AD%E1%83%98%E1%83%A0%E1%83%9D%E1%83%94%E1%83%91%E1%83%94%E1%83%91%E1%83%98\\_unwomen.pdf](http://issa-georgia.com/files/Reports/UN%20women/%E1%83%A5%E1%83%90%E1%83%9A%E1%83%97%E1%83%90%20%E1%83%A1%E1%83%90%E1%83%AD%E1%83%98%E1%83%A0%E1%83%9D%E1%83%94%E1%83%91%E1%83%94%E1%83%91%E1%83%98_unwomen.pdf)
28. Էթնիկականության և բազմամշակութայնությունը ուսուցման կենտրոն, (2018), *Ա, կոնկուրենտությունը էթնիկական փոքրամասնությունների ձայնների համար Վրաստանում. 2017 թվականի տեղական ընտրությունները*, քաղաքականության էությունը, Թբիլիսի:
29. Ազգային-ժողովրդավարական ինստիտուտ (NDI), CRRC– Վրաստան: (2018) Հանրային կարծիքի ուսումնասիրություն:
30. Կովկասյան բարոմետր (2017), Վրաստան - <https://caucasusbarometer.org/ge/>

31. Վրաստանի ընտրական վարչություն, (2016), Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների հաշվետվությունը - <http://cesko.ge/res/docs/Parliament-Web.pdf>
  
32. Վրաստանի առավարությունը, (2015), քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ստրատեգիաները և 2015-2020 թթ. գործողությունների ծրագիրը:
  
33. Վրաստանի հանրային պաշտպանը, հանդիպումը ընտրական-քաղաքական գործընթացներում ազգային փոքրամասնությունների ներգրավման թեմանայով- <http://www.ombudsman.ge/ge/news/shexvedra-saarchevno-politikur-procesebshi-erovnuli-umciresobebis-chartulobis-temaze.page>
  
34. Վրաստանի օրենսդրական սուրհանդակ, քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ստրատեգիան և 2015-2020 թթ. գործողությունների ծրագրի հաստատման մասին - <https://matsne.gov.ge/ka/document/view/2958879>
  
35. Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, (2014), 2014 թվականի բնակչության մարդահամարի պաշտոնական տվյալները- [www.geostat.ge](http://www.geostat.ge)
  
36. Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, 2018, [http://www.geostat.ge/?action=page&p\\_id=178&lang=geo](http://www.geostat.ge/?action=page&p_id=178&lang=geo)
  
37. Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, 2017, [http://www.geostat.ge/?action=page&p\\_id=145&lang=geo](http://www.geostat.ge/?action=page&p_id=145&lang=geo)